

Սա չի եղել ու դժվար էլ լինի Աշխարհի որևէ այլ երկրում: Առաջին խոսքը տրվում է այլ երկրի առաջին դեմքին, հնչում է հայկական դուդուկը, հնչում է հայերեն կատարում ֆրանսիացու կողմից

...Ֆրանսիայի ազգային տուրքի ժամանակ առաջինը հնչում է Հայաստանի հիմնը, Ֆրանսիայի ազգային տուրքի ժամանակ էլ երկրի նախագահին համահավասար մասնակցում է մեկ այլ երկրի նախագահ: Սա չի եղել ու դժվար էլ լինի աշխարհի որևէ այլ երկրում: Առաջին խոսքը տրվում է այլ երկրի առաջին դեմքին, հնչում է հայկական դուդուկը, հնչում է հայերեն կատարում ֆրանսիացու կողմից (զուգահեռաբար չի հնչում ֆրանսերեն ոչինչ) ու երբ դուրս են բերում դագաղը, տեսնում են ֆրանսիայի եռագույնը ու

հաստատ համոզված եմ, որ ինչ-որ մի տեղից դուրս է գալու նաեւ հայկականը... ու դուրս են բերում ծաղկեփնջի տեսքով...

Ինչքան պիտի սիրես էն հերոսին, որին ճանաչարհում ես հավերժություն, որ էլ աստիճանի հարգանքի տուրք մատուցես ոչ միայն նրան, այլև նրան ծնող ազգին ու հեռավոր, էն մյուս հայրենիքին...

Գևա խաղաղությամբ, Շառլ:

Շնորհակալություն, Ֆրանսիա:

Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ ելույթը Շառլ Ազնավուրի հրաժեշտի արարողությանը

Իրականությունն կդարձնենք Ձեր պատգամը, կյանքի կկոչենք Ձեր ցանկությունը

Այսօր հավաքվել ենք մեր խոնարհումը բերելու եւ գնահատանքի մեր տուրքը մատուցելու ֆրանսիական շանտնի մեծ վարպետին՝ Շառլ Ազնավուրին: Ուր տասնամյակ այս անունը ժպիտ է փորագրել միլիոնավոր դեմքերի վրա, արագացրել կամ դանդաղեցրել տասնյակ միլիոնավոր մարդկանց շնչառությունը, փայլ է ներարկել հայրուր միլիոնավոր աչքերի մեջ:

Եվ այս անունը 2018 թվականի հոկտեմբերի 1-ին մի պահ կանգնեցրեց երկիր մոլորակի եւ միջազգային կյանքի ընթացքը՝ մի անամոքելի թախիծ վրձնելով հարյուր միլիոնավոր մարդկանց դեմքերին, իր վերջին եւ ամենազանգվածային աֆիշը թողարկելով աշխարհի առաջատար լրատվամիջոցների առաջին էջերին: «94 տարեկան հասակում վառացել է Շառլ Ազնավուրը»:

Բայց ինչի՞ մասին են պատմում այդ վերնագրերը, ինչի՞ մասին են պատմում այդ ազդագրերը: Մի թե ունայնության կամ հուսահատության: Ոչ, ամենեւին, այդ ազդագրերը պատմում են սեփական ճակատագրի նկատմամբ այս մեծ մարդու եւ նրա գերդաստանի տարած փառահեղ հաղթանակի մասին:

Շառլ Ազնավուրի նախնիները Հայոց ցեղասպանությունից մազապուրծ՝ դեգերեցին աշխարհում եւ, ի վերջո, հանգրվանեցին հայրուր հազարավոր հայերի օթեան ու հույս տված Ֆրանսիայում, որտեղ էլ ծնվեց Վաղինակ Ազնավուրը, որ հետո պիտի դառնար մենք Շառլ Ազնավուր:

Գրելով անասելի դժվարություններ, Վաղինակ-Շառլը, ի վերջո, գտավ իր կոչումը, բայց այդ կոչումին, բացի իրենից, չէր հավատում ոչ ոք: Բոլորը նրան համոզում էին, բացատրում, որ բեմն իր գործը չէ, երգելն իր կոչումը չէ, որ ճակատագիրն առանց այն էլ շռայլ է գտնվել իր նկատմամբ իր ծնողին փրկելով ցեղասպանության աղետից:

Բայց Վաղինակ Ազնավուրյանին կարեկցանք չէր հարկավոր, այլ առաքելություն, եւ նա գիտեր իր առաքելությունը, եւ այդ առաքելությունը Շառլ Ազնավուր դառնալու աներեւակայելի ճանապարհն էր: Եւ նա երգեց ու գրեց, եւ նա գրեց ու երգեց դատարկ եւ կիսադատարկ դահլիճներում, եւ նա երգեց անհոգն ու աննահանջ եւ մարդկությանը տվեց ժամանակ՝ հասկանալու եւ գիտակցելու, որ մի մեծ աստղ է ծագել համաշխարհային մշակույթի երկնակամարում, որ դեռ մի քանի տասնյակ տարիներ պետք է «պայթեցնի» աշխարհի ամենահեղինակավոր դահլիճները:

Եւ նրա ձայնը տարածվեց աշխարհի բոլոր կողմերում, հասավ ամենահեռավոր երկրներ եւ ջերմացրեց նույնիսկ ամենասառը սրտերը:

Ցավոք, ես չհասցրեցի անձամբ ծանոթանալ Մեծ Վարպետի, Շառլ Ազնավուրի հետ: Բայց հավատացե՛ք՝ նրան ընկալում եմ որպես մերձավոր հարազատի: Նրան այսպես ընկալում է ցանկացած հայ, որովհետեւ Ազնավուրն այն մարդն է, ով հայի անունը հասցրել է նոր բարձունքների, ով հայի հպարտությանը մի նոր շունչ է տվել ու մի նոր երանգ, ով կարողացել է ապրել իր պատմական հայրենիքի եւ իր ժողովրդի ցավերով, հոգսերով ու երազանքներով:

Նաեւ այս է պատճառը, որ Շառլ Ազնավուրին շնորհվել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում: Բայց նա այդ կոչումը վաստակել է ոչ միայն շանտյեի իր հանճարով, այլեւ Հայաստանի Հանրապետության կայացման գործում ունեցած անուրանալի վաստակի համար:

Հայաստանում նրա անունով կոչված են փողոցներ ու հրապարակներ, իսկ Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիում արդեն երկար տարիներ վեր է խոյանում նրա մեծաշուք արձանը, եւ նա թերեւս միակ մարդն է, որին Հայաստանում արձան է կանգնեցվել կենդանության օրոք:

Շառլ Ազնավուրի մահվան կապակցությամբ Հայաստանում սուգ է հայտարարված, եւ այս ամենն արտահայտում է այն հսկայական սիրտ, որ յուրաքանչյուր հայ, յուրաքանչյուր հայ՝ առանց բացառության, տածում է այս մեծ մարդու, այս մեծ ֆրանսիացու, աշխարհի այս մեծ քաղաքացու նկատմամբ:

Ֆրանսիայի Հանրապետության մեծարգո նախագահ պարոն Էմանուել Մակրոն,

Շառլ Ազնավուրի հրաժեշտի այս վեհաշուք արարողության ընթացքում չեմ կարող չարտահայտել այն առանձնակի հարգանքն ու երախտագիտությունը, որ մեր ժողովուրդը տածում է Ձեր երկրի նկատմամբ: Եվ ցանկանում եմ հայ ժողովրդի երախտագիտությունն արտահայտել Ֆրանսիայի պետությունից եւ բոլոր ֆրանսիացիներին՝ ցեղասպանությունից մազապուրծ մեր ժողովրդին օթեան տալու եւ հայկական տաղանդի զարգացման բարենպաստ միջավայր ձևավորելու համար: Ֆրանսիայի պալատները տվել է այնպիսի անուններ, ինչպես Շառլ Ազնավուրը, Անրի Վերնոյը, ժորժ Գարբարենցը, Գառզոն, ժաննետը, եւ Ֆրանսիան մեր ժողովրդի վերածննդի մի սիրելի օազիս է դարձել:

Շառլ Ազնավուրն, անշուշտ, Ֆրանսիայի մեծ նվիրյալ էր, Ֆրանսիայի մեծ քաղաքացի, ֆրանսերենի տարածման մի անկրկնելի մոնետիկ, բայց նաեւ Հայաստանի մեծ պաշտպան էր, Հայաստանի քաղաքացի եւ Հայաստանի Հանրապե-

տության դեսպան:

Նա ապրում էր Հայաստանի հոգսերով, եւ մեր ժողովուրդը նրա հոգատարությունը տեսել ու զգացել է երեսուն տարի առաջ տեղի ունեցած մեծ երկրաշարժի ժամանակ, Հայաստանի անկախության բոլոր դժվարին օրերին:

Շառլ Ազնավուրն անտարբեր չմտաց նաեւ Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության նկատմամբ եւ ինձ ուղղված վերջին նամակում, մասնավորապես, գրել էր. «Հենց որ առողջությունս թույլ տա, ջերմորեն փափագում եմ այցելել այս նոր Հայաստանը եւ ծանոթանալ այն առողջ ու մերթիւն, որոնք ձևավորելու են մեր ազգի գալիքը»:

Մեծ Վարպետը պատրաստվում էր Հայաստան այցելել հաջորդ շաբաթ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության տասնյոթերորդ գաղափարական առիթով, եւ նրան խոստացել էի ծանոթացնել Նոր Հայաստանի հետ, խոստացել էի, որ նա միանգամից կզգա Նոր Հայաստանի հաղթանակած քաղաքացու լավատեսությունն ու ոգին:

Ցավոք, այս խոստումը չկարողացա կատարել, սփոփանքս այն է, որ Ազնավուրն, այնուամենայնիվ, հասցրեց իր վերջին ուղերձը հղել նոր Հայաստանին՝ ինձ գրած նամակում ասելով. «Սրտանց փափագում եմ, որ Հայաստանի երիտասարդությունը կարողանա երբեք դրսևորել իր ողջ ներուժը եւ իր երազանքներն իրականություն դարձնել Հայաստանում»:

Միքելի Վարպետ, Մեծարգո Շառլ Ազնավուր.

Ձեր նամակում դուք ճշգրտորեն ձևակերպել եք այն, ինչ ուզում է հայ ժողովուրդը, ինչ ուզում է Հայաստանի երիտասարդությունը: Եվ այստեղ, հիմա, աշխարհի աչքի առաջ ուզում եմ հանդիսավոր կերպով Ձեզ խոստանալ, որ իրականություն կդարձնենք Ձեր պատգամը, կյանքի կկոչենք Ձեր ցանկությունը: Ուզում եմ հավաստիացնել, որ անհնազորող նվիրված եմ այն գործին, որ նոր Հայաստանը պիտի դարձնի այնպիսին, ինչի մասին Դուք երազում էիք: Գաատ եւ Երջանիկ Հայաստանն իսկապես արժանի գնահատանքը կլինի Հայ ժողովրդի եւ Հայաստանի նկատմամբ Ձեր ունեցած անուրանալի վաստակի:

Խոնարհվում եմ Ձեր առաջ՝ մեծ ֆրանսիացի, մեծ հայ, մեծ արվեստագետ, մեծ հումանիստ:

Ննջիր խաղաղությամբ, սիրելի Վարպետ:

Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆ,

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Էմանուել ՄԱԿՐՈՆԻ ելույթը Շառլ Ազնավուրի հրաժեշտի արարողությանը

Ֆրանսիայում պոետները երբեք չեն մահանում

Շառլ Ազնավուրը ցանկանում էր ապրել մեկ դար, նա խոստացել էր իրեն, նա խոստացել էր մեզ, կարծես դա լինել նրա կյանքի վերջին մարտահրավերը: Տարիքը երբեք նրան չգրկեց անհագ կյանքի ծարավից, ստեղծագործելու, սիրելու, երգելու ցանկությունից, բայց նրա նպատակից մի քանի քայլ առաջ նա հեռացավ:

Այս հանկարծակի դատարկությունը հասկացրեց մեզ ակնհայտ մի բան, որ մեկ ամբողջ դար նա էր մեզ ապրեցում, մեր կյանքի դժվարին, դառնության, հույսի պահերին Շառլ Ազնավուրը մեզ մեկնեց սփոփիչ հայելին՝ իր ստեղծագործություններով, որով նա երկար տարիներ մեր կյանքն ավելի մեղմացրեց, օգնեց դիմակայել կյանքի մարտահրավերներին: Նրա երգերն ամառային դատարկ երգեր չէին, որոնք մարդկանց մի պահ ուրախացնում էին և մոռացվում, նրա երգերը միլիոնավոր անձանց համար դարձան սփոփանք, միայնության, նա երգում էր մեզ համար որպես կյանքի ուղեկցի, պատմում կյանքի դժվարությունների մասին: Առանձնակի ձևով էր խոսում ժամանակի մասին, նրա ստեղծագործությունները միայն տիրություն չէին պատմում, դրանք ներկայացնում էին նաև նրա՝ գաղթի և քաղաքի փորձը: Ասում են, որ քաղաքի տարիները կրկնակի են հաշվում, նրա մոտ ֆրանսիացիները շատ արագ նկատեցին դա:

Տարիների ընթացքում Շառլ Ազնավուրի ձայնի հնչերանգը մեզ միավորել է՝ անկախ մեր տարիքից և սոցիալական աստիճանից: Ազնավուրը միավորեց մեզ և դարձավ Ֆրանսիայի դեմքերից մեկը: Ազնավուրի երգերն առաջին հերթին բանաստեղծություններ են, որոնց բառերը գնում են դեպի մեր սիրտը, այդ բանաստեղծությունների վերնագրերը, և երգերի կրկներգերը դարձել են մեզ համար

ժառանգություն:

Շենց այս ձևով է, որ հաստատվում է արվեստագետի հանճարը: Ֆրանսերեն լեզուն է դարձել Ազնավուրի համար այն ակունքը, կապը, որ հյուսել է Ֆրանսիայի հետ: Հայ և հույն գաղթականների որդին, որը կրթություն չստացավ, բնագոյաբար հասկացավ, որ Ֆրանսիայում լեզուն պետություն է պետության ներսում: Դերասանի որդին դարձավ փարիզեցի, սկզբում սկսեց հանդես գալ կինոյում, դժվարություններով, երբեմն կարճ երկխոսություններով, սակայն նա երբեք չէր հավակնում դառնալ դերասան: Այնուհանդերձ, նա նկարահանվեց վաթսուս ֆիլմերում, որոնցում շատերը դարձան գլուխգործոցներ: Նա միշտ եղել է երիտասարդների կողքին, եղել բաց նոր երաժշտությունների, ձայների, թե որքան է Ֆրանսիան կապված ամբողջ աշխարհի հետ: Նա երգեց ութ լեզուներով, բայց հանրությանն ամենուրեք ֆրանսերեն լեզվով մատուցեց իր երգերը:

Բոլոր առաքելություններից նա նախընտրում էր հավատարմությունը. հավատարիմ էր ծնողներին, կնոջը, ընտանիքին, բարեկամներին, ընկերներին, ծանոթներին և անծանոթներին, նա հավատարիմ էր նաև Հայաստանին: Ազնավուրը Հայաստանի գավախն էր, բարեկամը, դեսպանը, նաև այն առաստաձեն գավախը, որ օգնություն ձեռք մեկնեց 1988 թվականի երկրաշարժից տուժածներին: Նրա այդ հանձնառությունն այսօր շարունակում է «Ազնավուր» հիմնադրամը՝ ի նպաստ հայերի, Հայաստանի, ֆրանս-հայկական

բարեկամության: Չնայած այն ցավին, որ թողեց ցեղասպանությունը՝ Ազնավուրը շարունակեց իր գործողությունները և ձևավորեց իր պայքարը: Ազնավուրը մշտապես երգել է Հայաստանի, հայ ժողովրդի մասին ցանկանալով պաշտպանել այն մարդկանց արժանապատվությունը, որոնց փորձել են լռեցնել: Հավատարիմ մնալով իր արմատներին՝ նա մեզ ցույց տվեց իր ֆրանսիական հոգու մեջ օտարազգու փոքրիկ մասնիկը: Նրա շնորհիվ Հայաստանը շատ բան է տվել Ֆրանսիային: Նրա միջոցով այսօր առիթ է հիշելու, թե մենք որպես ազգ որքան պարտական ենք բոլոր այն հայերին, ովքեր ստիպված լքեցին իրենց երկիրը և եկան ապաստան գտնելու մեզ մոտ: Մա ընդհանուր ձևակառուցող է: Բոլոր երկրների հայեր, այսօր իմ մտքում դուր եք:

Հաջորդ շաբաթ Շառլ Ազնավուրը մեզ հետ պետք է լինել Երևանում՝ մասնակցելու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովին, և նրա տեղը բացակա կմնա: Թող Հայաստանի և Ֆրանսիայի միջև բարեկամությունն արժանի լինի նրա տված դասերին:

Վստահ եմ, որ դեռ շատ երկար տարիներ միլիոնավոր մարդիկ դժվարության, հույսի, ուրախության պահերին իրենց հիշողության մեջ կպահեն այն երաժշտությունը կամ այն երգերի բառերը, որ այս բացառիկ բանաստեղծը թողել է մեզ: Յուրաքանչյուրիս սրտում նա կշարունակի իր ճանապարհը՝ քայլելով ուղիղ, ձեռքը գրպանում, ժպիտը դեմքին, և մեզ հետ միասին նա հպարտորեն կանցնի այս դարը: Այլևս նա մեզ չի լքի, որովհետև Ֆրանսիայում պոետները երբեք չեն մահանում:

Էմանուել ՄԱԿՐՈՆ,
Ֆրանսիայի Դանրապետության նախագահ

Նույնիսկ իր մահով Ազնավուրը բարձրացրեց Հայաստանի վարկանիշը

Հետևելով հանճարեղ Շառլի հոգեհանգստի արարողությանը՝ Փարիզի Les Invalides համալիրից, հպարտությունը պատում է ինձ, որ աշխարհ եմ եկել երկրագնդի հենց այս հատվածում՝ Հայաստան աշխարհում, որ ժամանակակիցն էմ հանդիսացել մի հզորագույն գալակտիկայի, որի անունն է Շառլ Ազնավուր:

Նման արարողություն չէինք տեսել երբևիցե: Ահա մշակույթի ուժը, հանճարի ու մեծ հայրենասերի ուժը: Նույնիսկ իր մահով Ազնավուրը բարձրացրեց իր Հայաստանի վարկանիշը մի քանի տասնյակ անգամ: Այսօր մեծ հայի մահը սգում է ամբողջ երկրագունդը, անկախ կրոնից, մաշկի գույնից, նախապիտություններից, կուսակցական

պատկանելիությունից... Հնարավոր չէր թաքցնել արցունքները, երբ նրա աճյունը ներս բերվեց հայկական ծիրանափողից ամբողջ տիեզերքով մեկ տարածվող «Դէլ յամանի» մեղեդու ներքո, երբ հնչում էր Հայաստանի օրհներգը, երբ լսում էիր Հայաստանի վարչապետի հուզված խոսքը, որին հետևեց հայերեն երգ: Նույնիսկ Ֆրանսիայի նախագահի խոսքում մեծ ուշադրություն էր դարձվել Ազնավուրի հայ լինելուն... Շնորհակալ ենք քեզ, խոնարհվում ենք քո հիշատակի առջև ու թող Աստված լույսերի մեջ պահի քո հոգին:

Կարեն ԲՈՉԱՐՅԱՆ

Նրա երգը սիրո մասին, դա հավերժական դասական է համաշխարհային մշակույթի մեջ: Շառլ Ազնավուրը մի ողջ տիեզերք էր, եւ այդ տիեզերքը մնաց մեզ հետ ապրելու, առանց իր արարչի:

Վլադիմիր ՍՈՆՈՎՅՈՎ

Նաև քո մահով մեզ պարզեց արեցիր աշխարհի առաջ... մեզ մոտ է միայն արժանի լինել...

Գնաս բարով անկրկնելի, անփոխարինելի Շառլ...

Հասմիկ ՊԱՊՅԱՆ

Կարելի է ասել, որ մի ողջ դարաշրջան գնաց: Հեռացավ հայ ժողովրդի մեծագույն գավախը, ով պատկանում էր ողջ մոլորակին:

Հեռացավ մի մարդ, որը բարձրորեն կրում էր պատմությունը, սերն ու մշակույթը իր հայրենիքի, եւ այդ հայրենիքը հանդիսանում էր եւ Ֆրանսիան, եւ իր առաջին հայրենիքը Հայաստանը: Մարդ, որը երբեք չէր մոռանում հայ ժողովրդի մեծագույն ողբերգության մասին եւ իր հրաշք տաղանդն ու ազդեցությունը օգտագործում էր, որպեսզի աշխարհը չհամարձակվի մոռանալ այդ ողբերգությունը:

FORBES ամսագիրը Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ճանաչել է որպես տարվա լավագույն քաղաքական գործիչ



Ամերիկյան հանրահայտ Forbes ամսագիրը ամփոփել է կիսամյակը և հրապարակել ամենաճանաչված և սիրված քաղաքական գործիչների անունները, որոնք ընտրվել են սոցիալական արդյունքում:

Պարզվում է, որ ամենից շատ ձայն է հավաքել Նիկոլ Փաշինյանը, ով հայտնի է դարձել ժողովրդավարական իր հայացքներով և թավշյա, ոչ բռնի հեղափոխությամբ: Նրա շնորհիվ Հայաստանը դարձավ այն եզակիներից, որտեղ դեմոկրատիան ծաղկում է ապրում:

Երկրորդ հորիզոնականում է հայտնվել Վլադիմիր Պուտինը, ով ժամանակին զբաղեցնում էր առաջին հորիզոնականը: Լավագույն եռյակը ամփոփում է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը:

Մեր մեղքը. ազգային-արդյունավետ կառավարում

Սիրելիներ, այս հոդվածը գրել եմ 2006 թվականի օգոստոսին: Տպագրվել է «Հայկական ժամանակի» օգոստոսի 16-ի համարում: Վարչապետ ընտրվելուց հետո ամեն շաբաթ հիշում էի ես հոդվածի մասին, ու որոշեցի ձեզ էլ ներկայացնել: Ներկայացնում եմ ստորեւ, առանց փոփոխության:

Ամառային մի օր Իջևանի մեր տան բակում նստած միտք էի անում պետության արդյունավետ կառավարման մասին: Փորձում էի հասկանալ, թե ինչու, այնուամենայնիվ, հնարավոր չի լինում մեր երկրում պետական արդյունավետ կառավարում իրականացնել:

Եվ այն ժամանակ, երբ ուր որ է՝ պետք է եզրակացնեի, որ դրա մեղավորը, ասենք, օրինակ Ռոբերտ Քոչարյանն է, աչքս ընկավ մեր ծիրանի ծառին: Ամառվա այդ օրը, երբ հանրապետությունում ծիրանի բերքահավաքի ամենաթեժ շրջանն էր, մեր ծառի վրա ոչ մի ծիրան չկար:

Եվ սա բնական է, որովհետեւ ծիրանը Իջևանում բերք չի տալիս: Անգամ խոսակցություն կա, որ Իջևանում ծիրանը 17 տարին մեկ է բերք տալիս: Այս խոսակցությունը, սակայն, եւ ուրիշների, կամ ավելի ճիշտ մեր պապերի դառը փորձը մեզ չի խանգարել, որ մենք մեր այգու լավագույն տեղում երկու հատ ծիրանի ծառ տնկենք: Ու ամեն գարուն մեր ծիրանի ծառը ծաղկել է՝ ծաղկի 70 տոկոսը ցրտահարվել է, 20 տոկոսը կարկուտն ու անձրեւն են տարել, 10 տոկոսն էլ որդն է կերել:

Եվ այդպես, ամեն անգամ մենք չենք ընդունել մեր սխալը եւ մեզ հույս ենք տվել, որ հաջորդ տարի կարկուտ չի լինի, ցուրտ չի լինի, անձրեւ չի լկա: Բայց ամեն տարի նույնը կրկնվել է, որովհետեւ եղանակը, այնուամենայնիվ, շատ մեծ տատանումներ չի տալիս, ու այսպես թե այնպես ամեն տարի հիմնականում նույնն է կրկնվում:

Եվ ասա, մեր ծիրանի ծառը ստիպեց ավելի լրջորեն մտածել արդյունավետ պետական կառավարման մասին եւ դա անել սեփական օրինակով: Հարցը հետեւյալն է. մեզ՝ մեր

ընտանիքին, բաժին է հասել այս փոքրիկ, երեք-չորս հարյուր քառակուսի մետրանոց հողակտորը: Դա մի տարածք է, որտեղ մենք ե՛ւ նախագահ ենք, ե՛ւ վարչապետ. կառավարիչ կարճ ասած:

Եվ խնդիրը հետեւյալն է. ինչքանով ենք մենք արդյունավետ իրականացնում մեզ բաժին հասած տարածքի կառավարումը եւ ինչքանով ենք այն կարողանում ծառայեցնել ինքներս մեր բարեկեցությանը: Հարցը կարելու է ոչ միայն բարեկեցության, այլեւ արդյունավետ կառավարումը մեր մեջ որպես մտածելակերպ, գենետիկ կոդ սերմանելու իմաստով:

Որովհետեւ, եթե այսօր դու կառավարիչ ես 400 մետր հողակտորի եւ արդյունավետ չես կառավարում այն, ինչպես կարող ես երկիրը արդյունավետ կառավարել, եթե հանկարծ հայտնվես երկրի կառավարչի կարգավիճակում: Ու չէ՝ որ ՀՀ ամեն քաղաքացի կառավարման փորձը ձեռք է բերում առաջին հերթին իր տնտեսության, այգու, տնամերձի կառավարմամբ, ու սա այն քաղաքացին է, որ նախագահ, վարչապետ, նախարար լինելու իրավունք ունի:

Կարճ ասած, այն ժամանակ, երբ ես Հայաստանի անարդյունավետ կառավարման համար հզոր մեղադրանքներ էի պատրաստվում տեղալ, ասենք, պայմանականորեն՝ Ռոբերտ Քոչարյանի եւ նրա թիմի վրա, մեր ծիրանի ծառը ինձ համոզեց հանգիստ թողնել Քոչարյանին ու նրա ավագակախմբին:

Եվ եկեք նայենք, թե ինչպես ենք մենք կառավարում մեր տնամերձը: Գանք վերելից. բալի ծառ, որն, ըստ էության, երբեք բերք չի տալիս. հիվանդ է, ինչ է՝ չգիտեմ: Կեռասի ծառ, որ մեծ հաշվով երբեք բերք չի տալիս նույն պատճառով, ինչ որ ծիրանը: Կարալյկ. երկու ծառ. այստեղ ամեն ինչ կարգին է: Հետո կողք-կողքի շարված են սեւ ու դեղին սալորի ծառեր:

Միանք այն ծառերն են, որոնք Իջևանի պայմաններում հոյակապ բերք են տալիս, բայց մենք այդ ծառերը այնպես ենք լցրել իրար գլխի, որ նրանց, ըստ էության, գրկել ենք բերք տալու հնարավորությունից:

Հիմա գանք մեր տնամերձի բոստանային

մասին. այստեղ ցանված են լոլիկ, վարունգ, լոբի, պղպեղ: Ամեն տարի համոտեում ենք մեր բոստանի բերքն ու իրար համոզում, թե շատ համով է: Բայց այսքան տարի չենք էլ նկատել, որ լոլիկը իջևանյան մեր բակում հասունանում է այն ժամանակ, երբ շուկայում այն լինում է 60-100 դրամ, ու, փաստորեն, գուցե շատ ավելի ձեռնտու է այն գնելը: Նույնը, ըստ էության, կարելի է ասել նաեւ մյուս մշակաբույսերի մասին:

Կարճ ասած, ակնհայտ է, որ մեր տնամերձը խայտառակ անարդյունավետ է կառավարվում: Ցանկապատի վրայով նայում եմ մեր հարեւանների տնամերձներին՝ նույն վիճակն է: Ու այսպես, երկրում անարդյունավետ են կառավարվում հարյուր հազարավոր տնամերձներ, եւ այս պայմաններում անհասկանալի է, թե ինչու պետք է երկիրը արդյունավետ կառավարվի: Ինչի հաշվին:

Ելք կա

Բնականաբար, մեր տնամերձի արդյունավետ կառավարման հարցը եւ բարձրացրի մեր ընտանիքում: Ներկայացրի բոլոր փաստարկները՝ ծիրանի, կեռասի, լոլիկի եւ մյուս բաների մասին: Ոչ մի հակափաստարկ չհնչեց: Սկսեցինք մտածել ելքի ուղիների մասին:

Եղբայրս, որ գյուղատնտես է, արեց թերեւս ամենաօպտիմալ առաջարկը. անհրաժեշտ է տնամերձի ողջ տարածքով տնկել սեւ սալորի ծառեր եւ լրջորեն զբաղվել դրանց մշակմամբ: Հիմնավորումը հետեւյալն է. սեւ սալորը Իջևանի պայմաններում հոյակապ բերք է տալիս, բուժման կարիք չունի, եւ դրա չիր շուկայում մեծ պահանջարկ ունի ու թանկ արժի:

Սա իսկապես հոյակապ գաղափար է: Նշանակում է հենց աշնանը այգին պետք է մաքրել ամեն տեսակ այլ ծառերից, գտնել լավ տնկիներ եւ ողջ տարածքը տրամադրել 6-8 սեւ սալորի ծառերի: Բայց մի փոքր պարբերվեմ կա. այս ամենը պահանջում է կամք, աշ-

Արցախցին հողը կպահի, բայց դա անելու համար Ռոբերտ Զոհարյանն ու Սերժ Սարգսյանը իրեն հարկավոր չեն



Արցախի ԱԳ նախկին նախարար Արման ՄԵԼԻՔՅԱՆ

«Առաջին լրատվական»-ի գրողակիցը Արցախի ԱԳ նախկին նախարար Արման ՄԵԼԻՔՅԱՆԸ է:

– Պարոն Մելիքյան, վարչապետ Նիկոլ Փաշինյանն օգոստոսի 17-ի հանրահավաքում անդրադարձավ մեղադրանքներին՝ իբր եկել է հողեր հանձնելու: «Դուք պատկերացնո՞ւմ եք. ես Ղարաբաղի հարցով դեռևս մի բառ չեմ բանակցել, նրանք ասում են, թե եկել է հող հանձնելու: Իրենք իրենց հետ են շփոթում, որ բացի հող հանձնելուց, ուրիշ բանի մասին չեն բանակցել, և ես դա հիմա գիտեմ փաստաթղթավորված, որովհետև տիրապետում եմ բանակցային գործընթացի ողջ պրոցեսին, թե ով ինչ է խոսել»: Ըստ Ձեզ, ի՞նչ կարող է նշանակել այս հայտարարությունը:

– Պարոն Փաշինյանը միանգամայն իրավացի է. ցայսօր ՀՀ նախագահի աթոռը զբաղեցրած անձինք բանակցել են հակառակորդին տարածքներ հանձնելու միջոցով խաղաղություն հաստատելու տարբերակների շուրջ: Նրանցից որևէ մեկը երբևէ հնարավոր չի համարել բանակցությունների այնպիսի տարբերակ առաջարկել, որի առանցքը հողատվությունը չի լինի: Ավելին՝ նրանցից որևէ մեկը հարկ չի համարել կարգավորման այլընտրանքային տարբերակի նախապատրաստման ուղղությամբ մասնագիտական աշխատանք կատարելու հրահանգ տալ: Այժմ ՀՀ վարչապետ Փաշինյանի կողմից հնչեցված հայտարարության շնորհիվ կարելի է գալ այն եզրահանգման, որ նա հողատվությունը չի դիտարկում որպես խաղաղ կարգավորման գործընթացում մեր ազգային շահերին համապատասխանող հիմնարար սկզբունք և, ուստի, իրատեսական է համարում խաղաղության հաստատումն այլ սկզբունքների վրա հիմնված կարգավորման բանաձևի կիրառման միջոցով: Եթե այդպես է, ապա ես լիովին կհամու եմ այդ մոտեցումը՝ մենք ոչ միայն կարող ենք նոր բանակցային օրակարգ ձևավորելու առաջարկ անել միջնորդներին ու Ադրբեյջանին, այլև կարող ենք պայմաններ նախապատրաստել այն բանի համար, որպեսզի այդ

առաջարկն ընդունվի:

– Արդյո՞ք նոր իշխանությունը կիրապարակի այդ մանրամասները, թե ով ինչ է խոսել Ղարաբաղի հարցերով, և ով է պատրաստ եղել հող հանձնելու:

– Դա նոր իշխանության որոշելիք բանն է, բայց այստեղ հատուկ գաղտնիք չկա էլ պարոնայք Տեր-Պետրոսյանը, Քոչարյանն ու Սարգսյանը Միևսկի խմբի միջնորդությամբ անցկացվող բանակցություններում, այսպես թե այնպես, տարածքների հանձնումն են դիտարկել որպես խաղաղության հասնելու ուղի: Մեկը պատրաստ էր առանց նախապայմանների դրանք հանձնել, մյուսը՝ նախապայման էր դնում, բայց բոլորի համար էլ կարգավորման առանցքը մտում էր հող տալը:

– Հայաստանի նոր իշխանությունները հայտարարել են, թե պատրաստ են լիարժեք բանակցել Ղարաբաղի հարցով Հայաստանի Հանրապետության անունից, բայց Արցախի Հանրապետության անունից պետք է բանակցի Արցախի Հանրապետության իշխանությունը: Կա՞ որևէ նախադրյալ, որ Արցախը վերադառնա բանակցությունների սեղան:

– Այդ նախադրյալներն ինքներս պետք է ստեղծենք՝ չարժե սպասել, որ պաշտոնական Բաքուն անտրտունջ կհամաձայնվի ՀՀ իշխանությունների այս առաջարկին և, այդպիսով, հեշտությամբ կհրաժարվի ավելի քան երկու տասնամյակի ընթացքում կատարած աշխատանքի շնորհիվ ձեռք բերած արմատական քաղաքական առավելությունից: Միջնորդները ևս որոշակի շահեր են տեղավորել Մադրիդյան սկզբունքներ կոչված կարգավորման մոդելի շրջանակներում և նրանց էլ հեշտ չի լինելու համակերպվել պաշտոնական Երևանի նոր մոտեցումների հետ: Այդուհանդերձ, խնդիրը լուծելի է: Դրա համար որոշ կոնկրետ քայլեր է հարկավոր ձեռնարկել:

– «Մենք պատրաստ ենք ազգովի ջախջախիչ հակահարված տալու Ադրբեյջանի ցանկացած սադրանքի: Բայց մենք նաև պատերազմ չենք ուզում: Մենք պատրաստ ենք իսկապես խաղաղ բանակցությունների, մենք պատրաստ ենք հասնել խաղաղ կարգավորման, բայց նա, ով փորձում է ինձ վրա որևէ կապված գցել, էլի եմ ասում, նրանք չեն հասկանում, որ Ղարաբաղի հարցի լուծող–չլուծողը կառավարությունը չէ: Ղարաբաղի հարցի լուծողը ժողովուրդն է, և ես ուզում եմ ասել հետևյալը. եթե բանակցային գործընթացի արդյունքում կլինի կարգավորման մի տարբերակ, որին ինքս կհավատամ և կհամարեմ, որ դա լավ տարբերակ է, որևէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որևէ թուղթ կստորագրեմ կամ որևէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ և կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կնեղակայանեմ ձեզ, և դուք կորոշեք՝ մենք գնո՞ւմ ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում: Կորոշեք, որ գնում ենք՝ ուրեմն կզևանք, կորոշեք, որ չենք գնում՝ ուրեմն չենք գնա», – ասել է Փաշինյանը: Ո՞ր տարբերակը կարող է ընդունելի լինել Արցախի և Հայաստանի համար, ինչպե՞ս պիտի ընթանան բանակցությունները:

– Ես այժմ չեմ քննարկի իշխանություն–քաղաքացի մակարդակում խաղաղ կարգավորման ընդունելի տարբերակի համաձայնեցման մեխանիզմը՝ դա առանձին հարց է, որն իր ժամանակին պետք է լուծում ստանա: Կարևորն այն է, որ մինչ այժմ այս հարցում հայաստանյան քաղաքական օրակարգում առկա հիմնական մոտեցումները խնդրի լուծումը կամ պատերազմի էին հանգեցնում, կամ էլ կապիտուլյացիայի: Վարչապետ Փաշինյանի ելույթից կարելի է եզրակացնել, որ այդ տարբերակներից և ոչ մեկն էլ իր համար ընդունելի չեն, և դա հուսադրող է: Մենք պետք է ձգտենք արժանապատիվ խաղաղության, որի հիմքում կլինի փոխադարձ շահերի հարգումն ու մեր ժողովուրդների միջև թշնամանքի վերացումը: Այդօրինակ կարգավորման համար կիրառելի արդարության սկզբունքը պետք է ընկալել լինի ինչպես քաղաքական վերնախավերի, այնպես էլ շարքային քաղաքացիների մակարդակում: Սա այն նպատակն է, որին պետք է ձգտեն ՀՀ իշխանությունները, և որի իրականացումը

50

խատանք, համառություն: Համ էլ անհրաժեշտ է սալորպաչիր անելու ձևեր սովորել, հետո էլ անհրաժեշտ է այդ սալորպաչիրը իրացնելու ուղիներ փնտրել: Լավ, լավ, վերջ տվեք. ով էլ երբան զահիա ունի:

Համ էլ մեզանից այդեզործ ու առետրական դուրս չի գա: Ահա այսպես. հաջորդ մարտին մեր ծիրանը կրկին կծաղկի, ու ծաղիկը ցուրտը կտանի, մեր կետանը կչեչտի ու այդպես էլ կետաս չի դառնա: Մեր լույսը կհասնի օգոստոսի վերջին, ու ես մի շաբաթ–կիրակի Երեւանից ժամանած լրագրողս, կհամոզեմ այն, եւ թարմ լույսի հոտը ինձ կտանի դեպի իմ մանկության խորքերը, կհիշեցնի իմ կյանքի մոռացված դրվագներ, որոնք անասմանը են կիսվել իմ հոգին:

Ահա այսպիսի տխուր արժեքների գերին ենք ես ու մեր ժողովուրդը:

Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆ

Հեղափոխություն և աշխատանք



Ցանկացած հեղափոխության շնորհիվ (կամ պատճառով) կտրուկ փոխվում է քաղաքացիների (նաև գյուղացիների) կենցաղը, կարելի է ասել՝ կյանքը: Հավասարապես փոխվում է թե՛ հեղափոխության ջատագույների և թե՛ հակահեղափոխականների կյանքը: Հատկապես փոխվում է հեղափոխության առաջնորդների և առանձնապես անձամբ հեղափոխության առաջնորդի և նրա մերձավորների կյանքը: Բնականաբար, հեղափոխության առաջնորդների և նրանց մերձավորների կյանքը դեպի լաճ է փոխվում (ֆինանսական, սոցիալական և զանազան այլ իմաստներով): Բայց կյանքը ցույց է տվել, որ հեղափոխության առաջամարտիկներից ոչ բոլորն են շահել: Ասված է նույնիսկ, որ հեղափոխությունը խոռում է իր զավակներին: Այս ամենն առայժմ չի վերաբերում Փաշինյանի թավաշյա հեղափոխության զինակիցներին, որովհետև, փաստորեն, Նիկոլի և նրա գաղափարակիցների (զինակիցների) սկսած հեղափոխությունը դեռևս ընթացքի մեջ է: չի ավարտվել: Եվ ընդհանրապես որևէ հեղափոխություն երբևէ չի ավարտվում: Ավելի ճիշտ ցանկացած հեղափոխություն ավարտվում է աշխատանքով: Նիկոլի ու նրա գաղափարակիցների հեղափոխության առանձնահատկությունն այն է, որ չնա-

յած իրենց սկսած հեղափոխությունը չի ավարտվել, բայց աշխատելու ու աշխատանքի գործընթացը սկսված է: Ընդ որում՝ չափազանց բարդ ու չափազանց պատասխանատու աշխատանքի: Մենք բազմիցս տեսել ենք ու գիտենք, որ լավ հեղափոխականը ոչ միշտ է լավ նախարար կամ լավ պաշտոնյա լինում: Հակառակն ավելի հաճախ է պատահում: Տա Աստված, որ այս անգամ չպատահի կամ՝ հազվադեպ պատահի: Եթե նոր նախարարներն ու պաշտոնյաներն իրենց ղեկավարած տարածքներում կոռուպցիան վերացնեն կամ թեկուզ գզալիորեն պակասեցնեն, դա արդեն մեծ աշխատանք ու մեծ արդյունք կարելի կլինի համարել: Վերջին տարիներին Հայաստանի իշխանությունները և հատկապես Հայաստանի վարչապետները չափազանց շատ են խոսում կոռուպցիայի դեմ պայքարի մասին: Պայքարում, պայքարում էին, բայց Հայաստանում կոռուպցիան ոչ մի կերպ չէր վերանում: Նույնիսկ չէր էլ պակասում: Նույնիսկ ավելանում էր: Որովհետև ավելի շատ խոսում էին, քան գործում: Թավաշյա հեղափոխությունից հետո նոր Հայաստանում նույնպես պայքարում են կոռուպցիայի դեմ: Առաջամարտիկը վերստին վարչապետն է: Բայց հիմա արդեն ավելի շատ գործով են պայքարում, քան խոսքով, և դա ակնհայտ ու անժխտելի է: Դա արդեն իսկ աշխատանք

է, ընդ որում՝ միանգամայն լուրջ ու շնորհակալ աշխատանք, և համոզված եմ, որ այդ աշխատանքի պտուղները շատ շուտով ի հայտ կգան: Կոռուպցիայի դեմ պայքարը մանավանդ իրական ու իսկական պայքարը, իսկապես անհրաժեշտություն է, և անհրաժեշտություն է ոչ միայն թալանչիների պատասխանատվության կանչելը և թալանաձոր պետություն վերադարձնելը, այլև հարկավոր է ստեղծել այն նախահիմքերն ու պայմանները, որոնց առկայության պարագայում բացառվի թալանը: Որովհետև թալանի ու կոռուպցիայի պատճառը ոչ միայն մարդ արարածն է, այլև այն պայմանները, որոնք տվյալ մարդ արարածին հնարավորություն են տալիս թալանելու և կոռուպցիայով զբաղվելու: Իհարկե, պաշտոնյայի բարոյական կերպարը հույժ կարևոր է, և այն պետք է բոլորի ուշադրության առարկան լինի, բայց պետության կառուցման գործում ոչ միայն նախարարների, փոխնախարարների ու այլ պաշտոնյաների բարոյական նկարագիրն է կարևոր, այլև նույնքան կարևոր են տվյալ պաշտոնյաների պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտական պատրաստվածությունը, և հիմա, երբ երկրում հեղափոխություն ու հեղաշրջում է տեղի ունեցել, նորարարության պահանջ կա բոլոր բնագավառներում, և եթե հեղափոխության ընթացքում հեղափոխականների «դուլիով» կարգախոսը գտնված ու պահանջված էր, հեղափոխության նպատակներն ու գաղափարներն իրագործելու ու կյանքի կոչելու գործընթացի ընթացքում «դուլիով» կարգախոսից առավել նախընտրելի ու պահանջված պետք է լինի «խելքով» կարգախոսը: Գարևոր պետք է դիտարկվի նաև նոր Հայաստանում հին Հայաստանի լավագույն կադրերի օգտագործումը, իսկ որ այդպիսիք կան՝ չենք կասկածում: Գուցե քանակով ոչ շատ, բայց հաստատ կլինեն: Գլխեն օրինակելի ու արհեստավարժ մասնագետներ, ովքեր նույնիսկ կոռուպցիայի մեջ թաթախված չեն լինի: Գուցե քանակով շատ քիչ, բայց հաստատ կլինեն: Պարզապես հարկավոր է փնտրել և գտնել այդ քչերին: Այնպես, ինչպես ներքին գործերի բնագավառում Օսիպյանին գտան: Որովհետև միայն համակարգի, միասնական ու համընդհանուր ջանքերով է հնարավոր իրականություն դարձնել մեր երազած պետության տեսլականը:

Ռուկան ԵՐԵՎԱՆՑԻ

60 Արցախցին հողը կպահի...

Ես հնարավոր եմ համարում ու այդ մասին բազմիցս ասել եմ նաև նախկինում: Այլ հարց է, որ հող տալու խոստում տվածների համար այս մոտեցումն ընդունելի չի եղել՝ դա էր իրենց իշխանության գալու գինը և իրենք պետք է ամեն կերպ համոզեին մեր հանրությանը, որ հող տալուց բացի, մենք այլ անելիք չունենք:

– Երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհարյանն իր վերջին հարցազրույցում տողատակով հասկացրել էր, որ Ղարաբաղը համարում է իր հենարաններից մեկը՝ ակնարկելով, թե մտադիր է հանդիպել Բակո Սահակյանին: Տարիներ շարունակ Ռոբերտ Զոհարյանն ու Սերժ Սարգսյանն, ըստ էության, շահարկել են ԼՂ խնդիրը՝ Հայաստանում իրենց իշխանություններն ամրապնդելու, ընտրություններ կեղծելու,

կոռուպցիայով ու թալանով զբաղվելու համար: Այսօր էլ Զոհարյանն ակնարկում է, որ Արցախը մտադիր է վերածել հակահեղափոխության որջի: Ի՞նչ վտանգներով է դա հղի հայկական երկու պետությունների համար, ո՞րը պետք է լինի Արցախի իշխանությունների դիրքորոշումը:

– Բոլորովին վերջերս եմ եղել Արցախում և կարող եմ ասել հետևյալը՝ այնտեղ դեմ են տարածք հանձնելու քաղաքականությանը, և այդ առումով Ռոբերտ Զոհարյանին կամ Սերժ Սարգսյանին չեն դիտարկում որպես հող պահելուն ունակ քաղաքական դեմքեր: Այլ հարց է, որ փորձեր կարվեն իրավիճակն այնպես ներկայացնել, թե իբրև Արցախի հուսո ճրագն այս երկուսն են: Այդ փորձերն իրականություն հետ որևէ լուրջ աղերս չունեն: Արցախցին հողը կպահի, բայց դա անելու համար Ռոբերտ Զոհարյանն ու Սերժ Սարգսյանը իրեն հարկավոր չեն:

Արտակ ԵՂԱՉԱՐՅԱՆ

ԵՍ ՁԵՐ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՄ ՆԵՐԿԱ

Ես չեմ ապրում արդեն ու ես չեմ էլ մեռնում,
Եվ իմ չմեռնելը տևելու է երկար,
Ուր էլ լինեմ՝ տանը, դրսում, հեռաստանում,
Ես ձեր դատաստանին պետք է լինեմ ներկա:

Դուք, փոքր ու մեծ տերեր, այլեր դուք ապիկար,
Առաջնորդներ չնչին ու կեսկատար,
Ստոր ձեր տեսակին ստորոտն էր հարմար,
Դուք եղծությամբ, ստով հասաք կատար:

Մտքի ընտրյալներին դուք դարձրիք ծառա
Ու դարձրիք պատանդ, հիշւ ընտրազանգված,
Մի պարկ փուտ ալյուրով մաղդկանց խիղճը առաք,
Դուք՝ փչացած վաղուց՝ փչացրեցիք նրանց:

Ու լկեցիք հոգին ու փշրեցիք նորից
88-ի հրաշք ժողովրդին.
Մտիպեցիք լքել հայրենիքը, որին
Արյուն էին տվել, կյանք ու որդի:

Իսկ նա, որ ստորուկին ճգմեց իր մեջ, ելա՛վ,
Հանուն պատվի, պարտքի, եկավ հրապարակ,
Զորքով, փշալարով շուրջկալեցիք նրան
Ու ցանացիք ցարդել ոտքերի տակ...

Օ, խաղատուն դարձած հայրենական մեր տուն,
Ցեխերի մեջ ընկած մագաղաթյա մատյան,
Կախաղանի սյունից կախված անկախություն,
Մեր լույս երազների խավարակոտ պատյան:

Ես ի՞նչ, ի՞նչ խոսքերով նզովք կարդամ ու սաստ, Զեհ, որ խուժողով կարգերն այս երկնեցիք,
Ուր դուք դարձաք հեծյալ, ժողովուրդը՝ զրաստ,
Օտարի դուռն ընկած մի մուրացիկ:

Եվ ես հայ բանաստեղծ, ի՞նչ սև բախտի արժանացա,
Որ նգովքի խոսք եմ ասում... հային.
Հզոր ճախրից հետո այս անկումը տեսա
Եվ ապրեցի օրերն այս դիպալին:

[illegible]

Ո՛չ, չեմ ապրում արդե՛ն ու ես չեմ էլ մեռնում,
Իսկ թե՛ անեծք վերին՝ փառք ինձնից երկար,
Մե՛կ է, ո՛ր էլ հանգչեմ, ո՛ր փր գրեթեզմանում,
Ես ձեր դատաստանին յինչու եմ ներկա...

ՍԻՆԿԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Որտե՞ղ է գտնվում Շենգենը.

Բոլորս ենք քաջատեղյակ «Հենգեկյանս վիզա» հասկացության մասին, որով առանց որևիցե սահմանային արգելքների վիժամանակյա մուտքի թույլտվություն է արտոնվում դեպի եվրոպական երկրներ։ Սակայն թերևս ոչ բոլորը գիտեն, որ Շենգենը դա հենց այն բնակավայրի անվանումն է, որտեղ 1985-ին ստորագրվել է հայտնի Շենգեկյան համաձայնագիրը, որին ներկա դրությամբ վիացել են արդեն Եվրոպայի 26 երկրներ մոտ 400 միլիոն ընդհանուր բնակչությամբ։



Շենգենի փոքր գյուղաքաղաքը գտնվում է Լյուքսեմբուրգի հարավ-արևելքում՝ Մոզել գետի ձախ ափին, ուր հատվում են Լյուքսեմբուրգի, Գերմանիայի և Ֆրանսիայի սահմանները: Բնակավայրի տեսարժան վայրերից է 13-րդ դարի Շենգենի ամրոցը, իսկ տնտեսության հիմնական ճյուղը խաղողագործությունն ու գինեգործությունն են, ինչպես նաև բենզինի՝ Գերմանիայում գործող գնդերից ժման վաճառքը գերմանացի ավտոտերերին:

Լուսանկարում՝ Շենգենում գտնվող 18-րդ դարի պատմական կառույցն է, մեծահարուստ ազնվական Կոխի տունը, որտեղ ներկայումս գործում է եվրոպական ինտեգրման մասին պատմող մշտական ցուցադրություն, իսկ այդ կառույցին կից, Շենգենյան համաձայնության հրապարակում, տեղադրված է համաձայնությանը նվիրված մի հուշակոթող: Նշեն, որ Շենգենյան առաջին համաձայնագիրը ստորագրվել է 1985-ի



հուլիսի 14-ին՝ այն ժամանակ Շենգենի նախնական անդամ, Մոզել գետի վրա կանգնած «Արքայախուստը Մարիա Աստրիդ» զբոսանավով:

ՌԻՍԿԵՆ ՇՈՒԽՅԱԼ

ՀԱՅ-ԻՍԿԱՆԱԿԱՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից սկսած փոխառնչվել է բազմաթիվ երկրների ու ժողովուրդների, այդ թվում՝ իսպանացիների հետ: Այդ առնչությունները, սակայն, գործունե են դարձել միայն միջնադարում՝ Գիլիկյան հայկական թագավորության ժամանակաշրջանում: Այդ ժամանակ Իսպանիան երկուստեք շահավետ առևտրական կապերի մեջ էր գտնվում հայոց թագավորության հետ, որի նավահանգիստները միջազգային առևտրի համար կարևոր նշանակություն ունեին: Հայտնի է, որ 14-րդ դ. սկզբին Արագոնի և Կալենսիայի արքա Իսայմ II-ի խնդրանքով Կատալոնիայի առևտրականներին տրվել էին արտոնություններ Գիլիկիայում իրենց գործունեությունը ծավալելու համար, և դա, ըստ էության, նպաստել է այդ երկու պետությունների շփման ոլորտների ամրապնդմանը: Նաև հայտնի է, որ այդ ժամանակի բարեկամական հարաբերություններ էին հաստատվել նաև Գիլիկիայի հայոց արքա Օշինի (1308-1320 թթ.) և Իսայմ II-ի (1291-1327 թթ.) միջև: Վերջինիս դուստրը Իզաբելլա Արագոնացին, նշանված էր Օշինի հետ, ինչի կապակցությամբ իսպանական արքան Օշինին նվիրաբերել էր թանկարժեք զարդեր և նմուշներ, իսկ վերջինս Իսայմ II-ի խնդրանքով Տարագոնայի Մայր տաճարին նվիրաբերելու էր սուրբ Թեկլայի մատուցները, որոնք պահվում էին Միսի եկեղեցիներից մեկում (Թեկլան դասվում է վաղ քրիստոնյա սրբերի շարքը: Նա ծնվել էր Բլոնիայում 1-ին դ. 30-ական թթ., որտեղ նույն դարի առաջին կեսին իր քաղաքական գործունեությունը սկսեց ծավալել Պոդոս առաքյալը: Դառնալով վերջինիս հետևորդներից նա, հեթանոս քրմերի կողմից նեյթարկվելով հալածանքների և հետապնդման, ի վերջո Պոդոս առաքյալի հետ մեկնում է Իսպանիա, քարոզչություն է անում Տարագոնայում, որից հետո հաստատվելով Սելևկիա քաղաքում՝ 2-րդ դ. սկզբներին նահատակվում է հեթանոս հակառակորդների կողմից: Փրկելով նրա մատուցները քրիստոնյաները տեղափոխում են Գիլիկիա երկրպագելու համար): Այսպիսով երբ Օշինը պատրաստվում էր ս. Թեկլայի մատուցները նվիրաբերել Տարագոնայի տաճարին, նրա հակառակորդները, ովքեր դեմ էին կաթոլիկ Արևմուտքի հետ մերձեցմանը, ընդդիմանում են, և հայոց արքան ստիպված հրաժարվում է իր մտադրությունից, որը և պատճառ է հանդիսանում չեղյալ հայտարարելու Իզաբելլայի և Օշինի նշանդրերը: Միայն հետագայում՝ 1321., Օշինի որդին՝ Լևոն V արքան (1320-1342 թթ.), որի օրոք լավ հարաբերություններ են հաստատվում Գիլիկյան հայոց թագավորության և Կատալոնիայի միջև, ս. Թեկլայի մատուցների վրա մասը նվիրաբերվում է Տարագոնայի Մայր տաճարին, որտեղ էլ առ այսօր պահպանվում են դրանք, իսկ մատուցների մյուս մասը հետագայում տեղափոխվում է Գիլիկիա: Եվ 1370 թ. սեպտեմբերի 23-ից ի վեր տարագոնացիները, որոնց համար ս. Թեկլայի հանրավում է իրենց քաղաքի հովանավորը, նշում են այդ օրը որպես կարևորագույն տոն՝ «ս. Թեկլայի հիշատակի օր», քանի որ սեպտեմբերի 23-ին էր հայոց արքան կատարել այդ նվիրաբերությունը տարագոնացիներին, և դա է պատճառը, որ այդ օրը հիշատակվում է նաև որպես «Հայկական նվիրաբերության օր»:

Հայ-իսպանական փոխհարաբերությունների մասին են վկայում նաև այն որոշակալները, որոնք ստեղծվել են 13-րդ դ. Տոլեդոյի Մայր տաճարում, որոնք պատկերում են հայ հոգևորականների երթը, ինչպես նաև Կադիսի Սանտա Մարիա Տաճարին նվիրաբերած ջուղայեցի Շաքարյան եղբայրների կողմից պատրաստված օրինյալ ջրի մարմարե ավազանը, որը ունի հայերենով քանդակված հիշատակարան:

Դեռևս 13-րդ դ. սկսած Գիլիկյան Հայաստանում բնակություն են հաստատել իսպանացիներ, որոնցից Պետրոս Հովհանն քահանան, ում իր աշխատությունում հիշատակում է ականավոր գիտնական Դևոդ Ալիշանը, նշելով, որ վերջինս «բնակ էր տեղիչուն և ոչ անցորդ պատահական», և ու մասնակցել է ջենովացիների հետ 1274 թ. դիվանագիտական բանակցություններին: Նույն դարաշրջանում Գիլիկյան Հայաստան են թափանցում նաև իսպանացի քարոզիչները՝ իբրև «Ֆրանցիսկյան» միաբանության անդամներ, որոնցից ոմանք, ըստ անվանի հայագետ Մադաքիա Օրմանյանի տիրապետում էին հայերենին և զբաղվում էին այնտեղ հայկական աղյուրների ուսուսմասիրությամբ և թարգմանությամբ: «Ֆրանցիսկյան» միաբանության անդամներից էր կատալոնացի հայր Բեռնարդը, ում հիշատակում է իր ուղեգրության մեջ Ֆրանսիացի հայտնի միսիոներ Հիլիոմ դը Ռուբրուկը, ով վերջինիս հետ հանդիպել էր 1255 թ. Նախիջևանում: Ավելի ուշ՝ 17-րդ դ. սկզբին, պարսկահայերի մեջ լայն գործունեություն են ծավալում նաև «Դոմինիկյան» և «Ավգուստինյան» միաբանությունների իսպանացի և պորտուգալացի միսիոներներ:

Կատոլիկայի և Լեոնի արքա Ալֆոնս X Բաստոնի (1252-1284 թթ.) «Երգեր ս. Մարիամի» երկասիրության պոեմներից մեկում ներկայացվում են այն դժվարությունները, որ կրել էր Հայաստանում իսպանացի մի երիտասարդ ուղևորվելով դեպի Սև լեռն այն ճգնաժամի մոտ, որ պետք է փրկեր իրեն սատանայից:

1301 թ. Գիլիկյան Հայաստանում, մասնավորապես Այասում, քարոզչական գործունեություն է ծավալում իսպանացի մեծ իմաստասեր, աստվածաբան, «Ֆրանցիսկյան» միաբանության անդամ Ռայմունդ Լուլիան, ով համարվում է նաև կատալոնյան գրականության հիմնադիրը: Այստեղ բացի քարոզչությունից, զբաղվել է նաև գրական գործունեությամբ, գրավոր աղյուրների ուսուսմասիրությամբ: Նա քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով Այասից վերադարձել էր Իսպանիա:

Հայաստանը և հայերը հիբրավի գրավել են իսպանացիների ուշադրությունը, ինչի մասին վկայում են իսպանացի դիվանագետ Գոնզալես դե Կալվիխոնի ճանապարհորդական նոթերը, ով եղել է Իսպանիայի թագավոր Հենրի III-ի կողմից նշանակված պատվիրակության ղեկավարը 1404 թ. Սամարղանդում Լենկ Թեմուրի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու համար: Երբ պատվիրակությանը հայտնի է դառնում, որ վերջինս գտնվում է Արցախում, իսպանացիները մեկնում են Տրապիզոն և Հայաստանի միջով անցնում են մինչև Խոյ: Այդ ճանապարհորդությունն իր արտացոլումն է գտել Կալվիխոնի նոթերում, որտեղ նա հանգամանորեն նկարագրել է Տրապիզոնը, Մուրմարուն,

Երզնկան, Իգդիրը՝ որպես առևտրի ու արհեստի կենտրոններ, անդրադարձել է նաև տեղի հայ բնակչությանը՝ նշելով նրանց հյուրասիրությունը, բարեպաշտությունը: Նա նկարագրել է նաև հայերի նկատմամբ մոնղոլ-թաթարների վայրագ վերաբերմունքը:

Հայ-իսպանական փոխհարաբերությունների մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև 15-րդ դ. իսպանացի ճանապարհորդ, հիդալգո Պեդրո Տաֆուրը, 19-րդ դ. ռուս հայտնի պատմաբան Մաքսիմ Կովալսկին և ուրիշներ:

Առավել հետաքրքրություն են ներկայացնում իսպանացի դիվանագետ Անտոնիո դե Գովալեսի հուշերը հայերի մասին, ով 1603-1618 թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ եղել է Պարսկաստանում իսպանական դեսպանության կազմում, և նա ցավով է նկարագրել այդ պատերազմի ընթացքում հայերի կրած անորոշ տառապանքների մասին: Այդ ժամանակաշրջանին է անդրադարձել նաև իր նոթերում իսպանացի միսիոներ հայր Պելլիորը, ով 1604-1605 թթ., լինելով Պարսկաստանում, անդրադարձել է այնտեղ գտնվող հայկական հուշարձաններին և հայ քրիստոնյաներին, Շահ-Աբաս I-ի կողմից իրականացված հայերի զանգվածային գերեվարությանը և կոտորածին:

Հայերի և Հայաստանի թեման իր արտացոլումն է գտել նաև միջնադարյան իսպանական գրականության մեջ, մասնավորապես Միգել դե Սերվանտեսի, Լոպե դե Վեգայի, Բալտասար Գրասիայի, Պեդրո Կալդերոնի և այլոց ստեղծագործություններում:

Իսպանիայի միջնադարյան պատմության հետ է առնչվում հայագի վեստգոթական արքա Երվիլի (Երվիլիտո, 680-687 թթ.) անունը: Ըստ վաղմիջնադարյան լատինալեզու «Ալֆոնսո III-ի ժամանակագրության», որտեղ ներկայացված է Պիրենեյան թերակղզու պատմությունը, վեստգոթական արքա Վամբայի (672-680 թթ.) գահակալման ժամանակաշրջանից մինչև Աստուրիայի արքա Օրդոնյո I-ի (850-866 թթ.) կառավարման վերջին շրջանը, բյուզանդական Կոստանդ 2-րդ կայսեր (641-668 թթ.) կողմից արտաքսված հայ իշխան Արտավազը (Արդաբաստ) ապաստան էր գտել Իսպանիայում, որտեղ վեստգոթերի արքա Խինդասվինտը (642-653 թթ.) շքեղաշուք կերպով նրան ընդունել էր և նրան կնության տվել իր գարմուհուն: Այդ ամուսնությունից ծնվել է նրանց որդին, ում անվանել էին Երվիլ, որն էլ վեստգոթական արքա Վամբայի գահընկեց անելուց հետո դարձել էր վեստգոթերի արքա: Հենվելով աշխարհիկ և հոգևոր վերնախավի վրա նա ձգտել է ամրապնդել թագավորական իշխանությունը Իսպանիայում: Նրա օրոք կառուցվել են Մերիդայի պարիսպները, մի շարք կամուրջներ և այլն: Վատառող լինելու պատճառով նա գահը ի վերջո զիջել է դստեր Գիլսիլոնայի ամուսնուն Էգիլին, ով մորական կողմից եղել է Վամբայի գարմիկը: Երվիլը վախճանվել է 687 թվականին:

Իսպանիայի հետ է կապված նաև Գիլիկիայի հայոց վերջին արքա Լևոն VI Լուսինյանի (1374-1375 թթ.) ճակատագիրը, ով 1375 թ. գերեվարվել էր իր ընտանիքի կնոջ Մարիոնի (Մարգարիտա դե Սուսանո),

գույգ դուստրերի, Պողոս I կաթողիկոսի և տասնյակ հայ իշխանների հետ միասին եգիպտական մամլուքների սուլթան Ալ-Աշրաֆ Շաբան II-ի կողմից և յոթ տարի շարունակ բանտարկված է եղել Կահիրեում: Հայոց արքայի բանտից ազատ արձակման հարցում կարևոր դերակատարություն է ունեցել «Ֆրանցիսկյան» միաբանության անդամ հայր Ժան Դարդելը, ով այդ գործի մեջ ներքաշել էր նաև Կաստիլիայի և Լեոնայի արքա Խուան I-ին (1379-1390 թթ) և Արագոնի Պեդրո IV արքային (1336-1387 թթ.), որոնց ջանքերի շնորհիվ փրկագնի միջոցով 1382 թ. ազատվելով գերություններից Լեոն VI-ը մեկնում է Եվրոպա (իսկ մինչ այդ դարձյալ փրկագնի միջոցով բանտից ազատվել էին նաև հայոց կաթողիկոսը և, մի քանի հայ իշխաններ, ինչպես նաև նրա կինը, ում երկու դուստրերը մահացել էին բանտում, մեկնում է Երուսաղեմ, որտեղ էլ անց է կացնում իր կյանքի վերջին տարիները), այցելում Հռոմի Ուրբանոս VI պապին, ապա 1383 թ. Անգլիայում հանդիպում Էդուարդ III արքային՝ վերջինիս հետ կնքելով Գլիկիայի թագավորական գանձարանը պահպանելու վերաբերյալ համաձայնագիր մինչև հայոց թագավորության վերականգնումը: Այնուհետև նա մեկնում է Իսպանիա, որտեղ, ըստ անվանի պատմաբան և բանասեր Արշակ Ալպոյաճյանի իսպանական գահակալները հայոց գահագուրկ արքային դիմավորում են արքայավայել պատիվներով: Խուան I-ը 1385 թ. հատուկ հրովարտակով Մադրիդ, Անդալուսիա և Վիլյառեալ ցլյան տնօրինելու իրավունքով նվիրաբերում է հայոց արքային: Նրան նաև տարեկան ապահովում են 100 հազար արաբական դրախմա եկամուտով: Հստ պատմաբանների Իսպանիայի գահակալների կողմից հայոց արքայի նկատմամբ նման ընդունելություն իսպանացիները երբևիցե չէին տեսել: Նրանք Լեոն VI-ին խոստանում են աջակցել Գլիկիայի գահը վերստանալու գործում: Իրականում, վերջիններս ձգտում էին օգտագործել հայոց արքային Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունն ընդարձակելու համար: Սակայն 1390 թ. Խուան I-ի մահից հետո վերջինիս որդու Էնրիկե III-ի ռեզենտները, ովքեր թշնամաբար էին ընդունել Խուան I-ի վերոհիշյալ հրովարտակը, անմիջապես չեղյալ հայտարարեցին Լեոն VI-ի արտոնությունները Կաստիլիայում, որից հետո նա ստիպված եղավ լքել Իսպանիան և մեկնել Փարիզ, որտեղ Ֆրանսիայի թագավոր Կարլոս VI-ը նրան դիմավորում է մեծ հանդիսավորությամբ: Մեն-Օուենի պալատը հանդիսացավ հայոց գահագուրկ արքայի վերջին նստավայրը: Տասնմեկ տարի շարունակ շրջագայելով եվրոպական երկրներով և դիմելով արքաներին նրանցից օգնություն ստանալու ապարդյուն հույսով էլ 1393 թ. վախճանվում է Գլիկիայի հայոց վերջին արքան, որի աճյունը ամփոփվում է դեղնա Լյուդովիկոս VII-ի օրոք 1137 թ. կառուցված Փարիզի Մեն-Դենի տաճարում, որտեղ գտնվում են Ֆրանսիայի գրեթե բոլոր արքաների ձայունները և տապանաքարերը: Միջին դարերում Իսպանիա էին մեկնում բազմաթիվ հայ ուխտավորներ, մասնավորապես Գալիսիա, որտեղ գտնվում էր Սանտյագո դե Կոմպոստելա վանքը, որտեղ պահվում են սուրբ Հակոբ Առաքյալի մատուցները, որի պաշտամունքն Իսպանիայում ծագել էր դեռևս 7-րդ դ. առաջին կեսին, բայց առավել մեծ

նշանակություն էր ձեռք բերել Ռեկոնկիստայի ժամանակաշրջանում (8-15-րդ դդ.): Սանտյագո դե Կոմպոստելա վանքը, ինչպես նաև Երուսաղեմի ու Հակոբի հայկական տաճարը թե իսպանացիների և թե հայերի համար հանդիսացել են ուխտագնացության կարևորագույն կենտրոններ:

Դեռևս 11-րդ դ. սկզբին 1050 թ. Իսպանիա՝ դեպի Սանտյագո դե Կոմպոստելա, ուխտագնացության է մեկնում Վասպուրականի արքա Հովհաննես-Մենքեթիմ Արծրունու (1003-1021 թթ.) դուստրը, ում անունը թերևս անհայտ է մնացել, և որտեղից նա այլևս չի վերադարձել Հայաստան: Նա այնտեղ ամուսնացել է Բրազանսայի ազնվական դու Սանդո Ալամ Ալոյի հետ, ունեցել զավակներ, որոնցից որդին դու Ֆերնան Մենդեսը, ամուսնացել է Կաստիլիայի արքայադստեր, իսկ դուստրը՝ դուսնա Ուրիանա Մենդեսը, կոմս Ֆաֆե Սերազիմ դե Լանիդո I-ի հետ, և այդ ամուսնությունից սկիզբ է առել պորտուգալական (1640-1853 թթ.), հետագայում նաև բրազիլական (1822-1889 թթ.) Բրազանսա արքայատոհմը:

Հստ աստվածաբան, լեզվաբան Մկրտիչ Ավգերյանի՝ 13-րդ դ. սկզբներին Իսպանիա է մեկնում Հովհաննես վարդապետը, ով հայերեն է թարգմանում ու Հակոբ առաքյալի վկայաբանությունը: Իսկ 16-րդ դ. Հայաստան է գալիս Սուրսիայի եպիսկոպոսի որդի Բաքեթուն, ով իսպաներեն է թարգմանում ու Հակոբ առաքյալի մասին պարականոնի հայկական տարբերակը:

Հստ Ղևոնդ Ալիշանի՝ Սանտյագո դե Կոմպոստելայում հայերն ունեին իրենց հանգրվանը, որ կոչվում էր «Երուսաղեմ», և որտեղ կատարվում էր հայերեն ժամերգություն:

Դեպի Իսպանիա մեկնող առաջին հայ ուխտավորներից էր Մարտիրոս Երզնկացին, ում վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը նրա ճանապարհորդական նոթերն են, որոնք պահվում են Երևանի Մատենադարանում (ձեռագիր N3488, էջ 170բ-180ա): Նա միաժամանակ համարվում է 15-րդ դ. երկրորդ կեսի առաջին հայ նշանավոր ճանապարհորդը, որի ուղևորությունը դեպի Եվրոպա այսօր էլ շարունակում է մնալ գիտնականներից շատերի ուշադրության կենտրոնում: Նրա ճանապարհորդության մասին գրել են Ղևոնդ Ալիշանը, Քերովմե Պատկանյանը, Հրաչյա Աճառյանը, Ֆրանսիացի աշխարհագետ Անտուան Ժան Մեն-Մարտենը, անգլիացի հռչակավոր գրող Ուիլիամ Մոմերսթե Մոնդը և այլք, որոնք անվանել են նրան «գարմանայի, քաջ մարդ», «անվեհեր ճանապարհորդ», «բարեպաշտ քրիստոնյա»:

Մարտիրոս Երզնկացու քսան էջանոց ճանապարհորդական նոթերից պարզվում է, որ հեղինակը վաղուց էր երազել ուխտագնացություն կատարել դեպի Եվրոպա քրիստոնյա առաքյալների գլխավոր սրբավայրերը, խոնարհվել Սանտյագո դե Կոմպոստելայում ու Հակոբ առաքյալի գերեզմանին: Այդ մասին նա գրել է այսպես. «Վաղուց հետո փափաքեի սուրբ գլխավոր առաքելոց գերեզմանին և սուրբ Յակոբայ գերեզմանին տեսնելու»: Իր բաղձալի ցանկությունն իրագործելու համար նա 1489 թ. հոկտեմբերին դուրս էր եկել Երզնկայից և ուղևորվել դեպի Եվրոպա: Այդ ողջ ճանապարհորդությունը տևել է ավելի քան յոթ տարի մինչև 1497 թ.: Մինչ 1492 թ. Սանտյագո դե Կոմպոստելա ժամանել Մարտիրոս Երզնկացին լինում է նաև եվրոպական բազմաթիվ երկրներում: Նրա ուղեգրության գրեթե կեսը վերաբերում է

Իսպանիային, որտեղ մանրամասնորեն նկարագրել է ու Հակոբ առաքյալի վանքը, անդրադարձել է իսպանացիների հյուրընկալությանը, ջերմությանը, նրանց առօրյա կյանքին: Ավելի քան երկու ամիս Ատլանտյան օվկիանոսում նավարկելուց հետո (ենթադրվում է, որ նա մասնակից է եղել Քրիստափոր Կոլումբոսի կողմից 1493 թ. սեպտեմբերին ձեռնարկված երկրորդ արշավախմբի ճանապարհորդությանը) ժամանում է Սևիլիա, հանդիպում Կաստիլիայի Իզաբելլա թագուհուն, որի, ինչպես նաև Հռոմի Բոլեոնտիոս VIII պապի և այլոց կետ նրա հանդիպումների (որոնց մասին նա հիշատակում է իր նոթերում, բայց չի նկարագրում) դրդապատճառները, նրանց խոսակցության, ձեռք բերված պալամատավորվածությունների և ստացած առաջադրանքների բուն նյութը մեզ համար դեռևս չբացահայտված է մնում, մեկնում է Բարսելոնա, այնուհետև՝ Վալենսիա:

Սանտյագո դե Կոմպոստելա մեկնել են նաև այլ հայ ուխտավորներ Հովհաննես վարդապետը 15-րդ դարում, ով իր թողած հիշատակարանում նկարագրել է Իսպանիայի եկեղեցական ծեսերը, տոնական երթերը, այնուհետև Մարգիս արեղան 16-րդ դարում, ով նույնպես իր ուխտագնացությունը սկսել էր Երզնկայից 1587 թ. և հասել էր մինչև «սուրբ Հակոբայ աշխարհ»: Նա մանրամասնորեն է նկարագրել Իսպանիայի եկեղեցիները, վանքերը, Մարդիքը, Սևիլիան, մեծապես տպավորվել Ֆիլիպ II-ի օրոք կառուցված Եսկորիալով: 17-րդ դ. սկզբին Իսպանիա է մեկնում նաև Ավգուստինոս Բաջեցին, ով, Պարսկաստանից ուղևորվելով դեպի Եվրոպա, լինում է մի շարք երկրներում՝ մանրամասն նկարագրելով Իտալիայի և Իսպանիայի եկեղեցիները: Նա Իսպանիան համարել է «լավ աշխարհ», իսկ իսպանացիներին անվանել «բարի քրիստոնյաներ»:

Հայ ուխտավորների հիմնական նպատակը, ինչպես նշվեց, եղել է տեսնել Իսպանիայում ու Հակոբ առաքյալի գերեզմանը, սակայն վերջիններիս ուշադրությունը չի վրիպել նաև իսպանացիների կյանքը, նրանց առօրյան, իսպանական քաղաքներն ու եկեղեցիները: Նման հետաքրքրություն դրսևորել են նաև հայ վաճառականները, գործարարները: 16-17-րդ դդ. հատկապես հաճախակի են դառնում վերջիններիս այցելություններն Իսպանիայի առևտրական կենտրոններ: Այդ վաճառականներից մեկին Ջաքարիա Ագուլեցուն, ով 1660 թ. գործնական հանդիպումներ է ունեցել Կադիսում, հիշատակում է Ղևոնդ Ալիշանը: Այդ ժամանակ Կադիսի կառավարիչը եղել է հայագի Ֆրանկեյան, ով կոչվել է նաև Խուան Գլադ Հայ: Կադիսում, ինչպես նաև Անդալուսում, 16-րդ դ.-ից գործել են հայկական մշտական համայնքներ:

Հստ ժուս պատմաբան Մաքսիմ Կովալսկու արդեն 16-րդ դ. վերջին և 17-րդ դ. սկզբին Պիրենեյան թերակղզու արևելյան ափերին հույների հետ միասին բնակություն էին հաստատել նաև բազմաթիվ քրիստոնյա հայեր:

Այսպիսով՝ տարբեր ժամանակներում հաստատվելով Իսպանիայում և բարեկամական հարաբերությունների մեջ մտնելով տեղի բնակիչների հետ՝ հայերը բերում կյանքով սկսեցին ապրել և կարողացան ինքնադրսևորվել տարբեր ասպարեզներում: Նրանք գործում մասնակցություն ունեցան

103

և ներկայումս էլ շարունակում են ունենալ Իսպանիայի տնտեսական և մշակութային կյանքում միաժամանակ նպաստելով հայ-իսպանական բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը:

Վաչագան ԽԱՇՎԱԶՍԷ
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գրականություն

1. Ք. Պատկանյան, Համառոտ տեղություն հայ պատմական գրականության, «Փորձ» 1880, N1, էջ 57-58:
2. Դ. Ալիշան, Միսրան, Վենետիկ, 1885, էջ 359, 363:
3. Դ. Ալիշան, Միսրան, Վենետիկ, 1893, էջ 457-458:
4. Մ. Ավգերեան, Լիակատար վարք և վկայաբանություն

սրբոց, հ. Ժ, Վենետիկ, 1894, էջ 303-304:

5. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 2, Պոլիս, 1912, էջ 1714-1715:

6. 2. Նալբեջյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 106:

7. Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հ. 2, Երևան, 1967, էջ 205:

8. Լ. Խաչիկյան, Մարգիս արեղայի ուղեգրությունը («Պատմա-բանասիրական հանդես», №3, Երևան, 1970), էջ 125, 141-142:

9. Մ. Զուլպյան, Եվրոպայի հեղինակները Հայաստանի և հայերի մասին 16-17-րդ դդ. («Պատմա-բանասիրական հանդես», №3, Երևան, 1985), էջ 23:

10. Ռ. Կյուլեբեկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Երևան, 1986, էջ 22, 38:

11. Ա. Արամյան, 5-17-րդ դդ. հայ-իսպանական պատմաշակութային կապերի պատմությունից («Լրաբեր հասա-

րակական գիտությունների», №8, Երևան, 1990), էջ 34-35, 38-39:

12. Ա. Բախչիյան, Հայագի գործիչներ: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Կենսագրական հանրագիտակ, Երևան, 2002, էջ 160:

13. Երևանի Մատենադարան, ձեռ. N 3488, էջ 170ր, 171ա, 172բ, 178բ-179ա,

14. Ковалевский М. О русских и других православных рабах в Испании. Кн. 2. СПб, 1886, с. 239.

15. Микаелян Г. Г. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 392.

16. Гильом де Рубрук. Путешествие в восточные страны. М., 1957, с. 189-190.

17. Циркин Ю. Б. Распространение христианства в Испании до Миланского эдикта. Л., 1983, с. 23.

18. Лэнг Дэвид Маршалл. Армяне. Народ – создатель. М., 2007. Гл. 9: Киликийская Армения.

Մեծ և Հզոր ռուսներնը, Քաղցրանուշ պարսկերենն ու Աստվածատուր հայերենը

Ես համոզված եմ, որ եթե մենք, հայերս, մեր ազգային հարստությունների ցուցակը կազմելիս լինենք, ապա առաջին տեղը այդ ցուցակում լինելու է մեր լեզուն: Ռուսներն իրենց մայրենին իրավամբ կոչում են Մեծ ԵՎ ՀՁՈՐ՝ պարսիկները մեծն Ֆիրդուսու լեզվին որակում են որպես ՔԱՂՑՐԱՆՈՒՇ, իսկ մենք, հայերս, մեր մայրենին լեզվին անվանելով ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ, հավատացնում են Ձեզ, հարգելի ընթերցողներ, որ ամենին էլ նրան չեն քեզ գերազնահատում: Անհրաժեշտություն չկա թվարկելու մեր մայրենու արժանիքները, մենք գիտենք նրանք: Մենք գիտենք նաև, թե ինչպիսի բարձր բնութագրեր են տվել մեր լեզվին անցյալի, ներկայի, ու հավատացնում են Ձեզ, ապագայում կտան, համաշխարհային մշակույթի գործիչները, սակայն այսօր ես ուզում եմ մի կարևոր հարցադրում անել. ինչքանով ենք մենք առօրյա կյանքում օգտվում մեր նախնիների ջանքերով ստեղծված, ժամանակի բոցերով անցած ու կոփված մեր Աստվածային լեզվից: Մենք ասելով մե առաջին հերթին նկատում ենք մեր հասարակության երևելի մարդկանց, ու նրանց թվում առաջին հերթին, մեր երկրի ղեկավարներին:

Հասարակական կյանքը, որով մենք ապրում ենք, սկսած պետական ապարատի բուրգի գագաթից մինչև թաղային ոստիկանն ու գյուղապետը, իրականում ընթանում է գրական հայերենից բացի, մի քանի բարբառներով ևս: Մեր մարդիկ շփվում են աշխատավայրում, դատարաններում, պետական հիմնարկներում, հեռուստատեսությունում, ողջ հանրության առջև, բայց հազարից մեկ անգամ է լինում, երբ հանրությանը հայտնի որևէ մարդ, լինի դա հանրապետության ղեկավարը կամ էլ ավելի փոքր տրամաշափի գործիչ, աչքի է ընկնում վառ խոսքով, իր հայտնի հրապարակային կամ հեռուստատեսային ելույթով: Ես կյանքումս տեսած չկամ մեկին, ով իր վառ, հոեռոտական խոսքով աչքի ընկներ մեր հասարակության առջև: Մարդիկ խոսում են, բանավիճում, զեկուցում են իրենց արած-չարածի մասին, բայց նրանց խոսքը ԳՈՐԾ Ե, մի տեսակ անաղ, անյուղ, անհամեմունք, անհամ, իսկ հեռուստատեսային ելույթից լավագույն դեպքում կլսես որևէ սրամիտ

անեկդոտ ու վերջ: Մենք նրանց լսում ենք, որովհետև պարտավոր ենք լսել, մենք կուլ ենք գնում նրանց, ասենք այսպես, բազկաթոռային հեղինակությամբ: Թե շրջանային, թե հանրապետական մակարդակի Ֆիցերդոսներն ու Դավիթ Անհաղթները, որպես դասակարգ, վերացել են: Բայց:

21-դ դարը մեզ բերեց ոչ միայն հիասթափություններ մեր կեցության համարյա բոլոր բնագավառներում: 21-րդ դարը մեզ միևրեց մի քաղաքական գործիչ, ով արմատապես տարբերվում է Հայաստանի քաղաքական երկնակամարի մյուս աստղերից այնպես, ինչպես ուսուրական վագրն է տարբերվում ընտանի կատվից: Դա ուսուրական վագրի դերն ստանձնած, Հայաստանի այսօրվա վարչապետ Նիկոլ Փաշինյանն է: Շուրջ երեք ամիս է ես զբաղված եմ նրա հանրային ելույթների վերլուծությամբ, սկսած 1999 թվականի հարցազրույցից, երբ նա միանշանակ հայտարարեց, որ ինքը չի հանդիսանում ինչ-որ մեկի խաղի ֆիգուրան, այլ գերադասում է սեփական խաղը սեփական խաղի կանոններով: Տակավին պատանի Փաշինյանն իր այս խոսքով փաստացի մարտահրավեր էր նետում բոլորին, մարտահրավեր, որն աննկատ ժամանակահատվածում գործող քաղաքական «գուբերներն» ու ավելի մանր տրամաշափի քաղաքական գործիչներին: Եվ այսպես:

Քաղաքական գործիչը, ով թատերաբեմ է մտնում, պետք է միանշանակ ասի իր՝ ով լինելու մասին: Հատկապես մեր, դրամատիկովի ծայր աստիճանի հասած հասարակության մեջ, որտեղ սատանան սրբի դիմակ է հագել, իսկ գալլը ոչխարի մորթի հագած շարական է կարդում: Ընդ որում կարդում է լարձուն, ոչինչ չատող ու ամեն ինչ ասող խոսքով, որից երբեք չէս հասկանա, չէս հաշվանա, նա Աստծո՝ կողմնակիցն է, թե՛ Մատանայի: Մենք, շարքային քաղաքացիներս, ուզում ենք իմանալ, թե մեզ խոսք ասող ու առաջնորդի դերին հավակնող մարդն ով է, ինչ է ուզում, ու ր է գնում, անկեղծ է նա թե ոչ, և որ ամենակարևորն է, կարո՞ղ է արդյոք նա իշխանական լուծը քաշել բավականաչափ արդյունավետությամբ: Մեզ անհրաժեշտ է իմանալ, որ նրա հետևից գնալով, փոքր

կրկնե՞նք, թե չէ: Նա «թշնամի՞ է», թե՛ բարեկամ, մորթապա շտ է, թե՛ հանրային շահի ջատագով: Փաշինյանի քաղաքական գործունեության սկզբից առ այսօր, նրա բոլոր ելույթներում ընդգծված անցնում է ազգային շահը, որը մանրանալով, դառնում է համայնքի կոնկրետ պրոբլեմ, անհատի անձնական հարց ու դիտարկվում է ՈՐՈՇԱԿԻՈՐԵՆ, տվյալ տեղում ու ժամանակում, կոնկրետ մարդկանց հետ: Այսինքն գոյություն ունի կոնկրետ հարցադրում, որը իր լուծման ալգորիթմով հասկանալի է դառնում լսարանին, դառնում է դյուրամարս իր շոշափելի հանգուցալուծումով: Սա է, որ գրավում է լսարանին ու շարքային քաղաքացուն: Սա է, որ չունեն մեր քաղաքական երկնակամարի թափառող աստղերը:

Դիտարկենք մեկ օրինակ՝ հակառակ կողմից: Ավագ սերունդը լավ է հիշում լուսահոգի Կարեն Դեմիրճյանի ելույթը Ժողովրդի առջև, երբ նա, չիմանալով ինչ անել, հրապարակում Լարաբաղ ու միացում պահանջող Ժողովրդին՝ պաշտպանում էր. «Լարաբաղը գրպանումս է, որ հանեմ ձեզ տան»: Ինչպիսի՞ եզրակացություններ կարելի է անել այսպիսի հայտարարությունից հետո:

Առաջին և գլխավոր եզրակացություն. մարդս դրությանը չի տիրապետում, նա տեղյակ չէ իր երկրում տեղի ունեցող պրոցեսներին ու նրանց վրա ազդելու հնարավորություն չունի: Ուստի խուճապի մեջ է: Իր կառավարման տարիներին նա մեծ սիստեմի մի տեղամասի ղեկավար էր, ով լավ գիտեր հնարավոր իրավիճակների հայտնվելու մասին (դրանք շատ քիչն էին, մեծ սիստեմը կառուցողը գիտեր իր հետևորդների՝ համեստ պոտենցիալի մասին), ու գիտեր նրանց քանակն ու լուծման ալգորիթմները: Կենտրոնը նախօրոք հոգում էր այդ մասին: Իսկ հիմա նա հայտնվել է մի գորահրամանատարի դերում, ով խաղաղ տարիներին սովոր էր տրիբունայում կանգնած ընդունել շքերթներ ու ճառեր արտասանել հայրենասիրական թեմաներով, բայց հիմա պատերազմ է սկսվել ու պետք է պատերազմական իրավիճակին համապատասխան որոշումներ, իսկ

113

ինքն ընդունակ չէ դրան: Թշնամին հայտնվելու է անհայտ կողմից, անհայտ հնարավորություններով ու անհայտ նպատակներով, նա մահ է բերում քեզ ու քո ժողովրդին ու դու պատրաստ պիտի լինես դրան, կարողանաս մեծ ճշտությամբ կանխատեսել դեպքերի զարգացման բոլոր հնարավոր տարբերակները: Հազար ու ողորմի քեզ, Վլադիմիր Իլյիչ, ասում էիր. «Կառավարել, նշանակում է կանխատեսել» (Управлять – значит предвидеть!) Դրանով էլ տարբերվում է տաղանդը միջակից, հանձարը տաղանդից: Կարեն Դեմիրճյանը, չունենալով կայուն հայացքներ ու ուղեցույցներ, չունենալով հոետորական տաղանդ ու չլինելով հանձար գնաց հարմարվելու ու կիսատ-պատտ որոշումներ կայացնելու ճանապարհով ու կործանվեց դառնալով իր նման անկայուն հայացքներ, բայց ագրեսիվ ու ավագակային բնույթ ունեցողների գոհ:

Գիտականներն ասում են, որ ճիշտ հարցադրումն արդեն հարցն լուծման հաջող սկիզբն է, եթե ոչ լուծման կեսը: Դեմիրճյանը չկարողացավ ու որոշել իր անելիքը, չկարողացավ գործող պետական ապարատն օգտագործել իր, անկասկած, բարի ու առաքինի նպատակների համար ու իր բոլոր բաց թողելով իշխանությունը, դարձավ պատմական անցյալ: («Հանգիստս այսպես ցնդեց վաղանցուկ// Իշխանությունը դա մի խիտ նշ է, դա հովի շուն է, լյարձուն մի ձուկ» – Ֆիրդուսի, Շահ-նամե) Նրա խոսքը վատ չէր, համարյա միշտ գունատ էր, իսկ նրա լարարանը արդեն երկրորդ խոսքից հոգնում էր վաղուց լավոր ստանդարտ ու միապաղաղ խոսքից: Դեմիրճյանը լինելով հանրապետության ղեկավար, վատ հոետոր էր, չէր տիրապետում այդ արվեստին, ու հայոց լեզվի ԱՀՌԵԼԻ հնարավորությունները նրա կողքով անցնում էին, ոչնչով չօգնելով նրա գործունեությանը: Նույն «հիվանդությամբ» էին տառապում Դեմիրճյանի ենթակաները, ովքեր ավանդույթի համաձայն, բերանները բաց, սպասում էին իրենց «շեֆի» հրամաններին, իսկ «շեֆը» լուռ էր մնում, երբեմն, լավագույն դեպքում ինչ-որ անձն խոսք շարունակելով որոշումներ սպասող իր ենթականերին ու ժողովրդին: Նույն այս «հիվանդությամբ» էին տառապում նաև նրան հաջորդող Ս. Հարությունյանը, Լ. Տեր-Ղևորդյանը, Ռ. Քոչարյանն ու Ս. Մարգարյանը, որոնցից երկրորդին, լեզվաբանի մասին ժողովուրդը նույնիսկ անեկդոտ էր հնարել, թե Լևոնը խոսում է բոլոր լեզուներով, հասկանում բոլոր լեզուները, բացառությամբ սեփական ժողովրդի լեզվից:

Քաղաքական դաշտ մտած Նիկոլ Փաշինյանը երբեք ոչ մի սիստեմի մարդ չի եղել, իսկ եթե եղել է, ապա եղել է իր ստեղծած փոքրիկ սիստեմի մասը, ընդ որում այդ սիստեմի կորիզն ու ծանրության կենտրոնը: Նա ազգա տ է, նրա վրա ծանրության ուժից բացի ոչ մի ուժ չի ազդում, ուստի նա կարող է մարտահրավեր նետել մեծ, ամեն տեսակի ատրիբուտներով զինված սիստեմին, մենակ: Նրա հիմնական գեներից մեկն այդ ճակատամարտում հայոց ամենագոր, Աստվածային լեզուն է, եթե ոչ գլխավորը: Բանասիրական ֆակուլտետի գերագանցիկ ակնհայտորեն իր հինգերը իզուր չի ստացել ու փառք նրա ուսուցիչներին: Նա իր ելույթներում ամբողջությամբ օգտագործում է

հոետորական արվեստի ողջ պաշարը: Դիտարկենք մի քանի օրինակներ, որոնք, ինձ թվում է, օգտակար կլինեն հայ երիտասարդությանն ընդհանրապես ու ուսանողությանը մասնավորապես:

Օրինակ առաջին. Պատգամավոր Փաշինյանը (արդեն վարչապետի թեկնածուն) ընդդիմախոսի արգումենտն օգտագործում է նրան իսկ ընդդեմ: Սա հոետորական արվեստի «այլիդրոն» է, երբ հակառակորդի ուժն օգտագործում են նրան տապալելու համար: Հանրապետական կուսակցության ներկայացուցիչը (Շարմազանով) մեղադրեց Փաշինյանին, թե նա չունի կոնկրետ թվեր իր առաջիկա գործունեության ծրագրում, որ առանց կոնկրետ թվերի դա երազների պլանն է: Լավ կլիներ չմեղադրեր ու լուռ մնար: Ահա Փաշինյանի պատասխանը. «Այո, դա երազների պլանն է, որովհետև դուք թվերի տակ տրորել եք մարդկանց երազելու իրավունքն ու հնարավորությունը...», այնուհետև. «...հայտարարում եմ պաշտոնական թվեր, ...կոռուպցիան գրո, բիզնեսի ամենամեծ վճարումները վարչապետի եղբորը գրո, մաքսատանը սպասելու ժամանակը գրո...»: Եվ այս ամենն ասվում է շեշտավորված, ձայնի ամպլիտուդայի պարբերական շեշտմամբ ու համապատասխան ժեստերով: Սա այն դեպքն է, երբ թշնամու արձակած արկերը բռնում են ու հետ են շարժում նրա դիրքերի վրա: Սա այն դեպքն է, երբ վերջին թիվը, ոչնչության խորհրդանիշ չը, գրոն, դառնում է իդեալական ու ցանկալի իրավիճակի խորհրդանիշ, զբաղեցնում է առաջին տեղը թվային առանցքի բոլոր թվերի մեջ: (Տանենք պատմական գուգահեռ: 1815 թիվ, Վատեռլոյի դաշտ: Գեներալ Կամբրոնը, ի պատասխան անգլիացի սպայի հանձնվելու առաջարկին, ամենավերջին բառը դարձնում է առաջնային, այդ բառով իսկ իրեն ապահովելով պատմական անմահություն. «Ա դը, գվարդիան մեռնում է, բայց չի հանձնվում»):

Օրինակ երկրորդ. Սուրեն Խաչատրյանի՝ Սյունիքի մարզպետ նշանակվելու փաստի արձագանքը: Հեգնանքն ու հումորը վաղուց է են տեղ գտել Փաշինյանի գիմանոցում: Նա կառավարող կուսակցության առաջնորդներից (այն ժամանակվա վարչապետ) Հ. Աբրահամյանին տառաջիորդեց մերկացնում է, աշխարհով մեկ ծաղրի ենթարկելով նրա կարգային քաղաքականությունը: Փաշինյանը վարչապետին պատմում է երևակայական քաղաքացու մասին, ով աշխատանք է փնտրում, ունենալով Սյունիքի մարզպետի նման քրեական հարուստ անցյալ ու ինդրում է աշխատանք տալ նրան կառավարությունում, աչքի առջև ունենալով հանցագործի պաշտոնի նշանակվելու փաստը: Նա հեգնանքով հարց է տալիս. գուցե դուք որդեգրել եք ռեցիդիվիստներին ուղղելու ռազմավարություն, նրանց նշանակելով պետական բարձր պաշտոններին, նրանց ուղղվելու նկատմամբ: Ծաղրի աստիճանը հենց սկզբից այնպիսին է, որ ծիծաղի պայթյուն է առաջ բերում թե՛ Ազգային ժողովում, թե՛ հեռուստացույցի առջև նստած ժողովրդի շրջանում: Բայց մերկացած վարչապետը, հավատարմի վաճառի նման իրեն շարժում է Փաշինյանի քննադատող գնդացիի վրա, պաշտպանելով օլիգարխիայի գլխավոր «կադրավիկ» և

իր անմիջական պետ («սենսեյ», «շելյա», «դզբաշի», «батька», «պապա», «հեղինակություն» կամ չգիտեմ թե ով) Ս. Մարգարյանին, իր վրա է վերցնում վարչապետի պաշտոնում կրկնահանգագործի պետական պաշտոնին նշանակման փաստը, թաղումային լրջություն ունեցող դեմքով ցուցաբերելով աննախադեպ հաստակաշություն, ձևացնելով, թե չի նկատում Փաշինյանի սպանիչ հումորը: Նա մերկացած ձեռքները փրփուրների են է գցում, ի նքն էլ ներքուստ իմանալով, որ գուր ջանքեր են դրանք: Փաշինյանն այստեղ մեծն Ֆիրդուսու օրինակելի աշակերտն է, ով իր հերոսի շուրթերով (Ռոստամ, Թուլատի հետ բանավեճելիս) ասում է. «...Ծիծաղը մտքի շա՛նքն է մոլեգին, //Որ վերջ է դնում ԼԿՏԻ, ՄԱՐՏԻՆՆՈՂ ՏԻՄԱՐԻ ՓԱՌՔԻՆ...»:

Օրինակ երրորդ. Փաստերի հակադրություն: ա) Փաշինյանը ընդդիմախոսներին տապալում է, ցույց է տալով իրենց իսկ աշխատանքի արդյունքները տարբեր բևեռների վրա, երբ հիշում է ավագ սպաների կյանքի աղետալի վիճակը ընտանիք-խրախուս ճանապարհին, անտուն մայրերի, փոխգնդապետների, զենդապետների կյանքն այն ժամանակ, երբ բարձրաստիճան պետերի համար բաղնիք են կառուցել 40 միլիոն դոլար արժողությամբ, հանգստավայր-ամառանոց 60 միլիոն դոլար արժողությամբ: Նրանց ա չքն է կոխում «ներքին կուլտուրա» հասկացությունը, քանզի իրոք կասկած կա, որ իր քաղաքական հակառակորդները լսած լինեն այդ մասին: բ) «...ու ձեր պահած ընտանիքների ֆոնի վրա յա, որ Հայաստանում 200 հազար ընտանիք աղքատ ա, հացին կակա յա, ասում...»: Այս համարձակ ու սպանիչ խոսքն է, որն ասվելով առօրյա, ոչ գրական, բայց «տեղական» ու պատկերավոր խոսքով տապալում է ընդդիմախոս-պաշտոնյային, ի ցույց է դնում նրա անկարողությունն ու անհամապատասխանությունը իր պաշտոնին: Այս խոսքն է, որ ընկճված ժողովրդին հույս է տալիս ու կյանքի անորոշության խավարով լցված թունելի վերջում լույս ու հույս, որ կգան լավ ժամանակներ: Այս խոսքն է, որ ընկճվածին ու ժ է տալիս, իսկ համարձակ մարդուն՝ կրկնապատկում ուժերը, իսկ հակառակորդներին ստիպում պապանձվել: Այսամա հիշում են մեծն Թումանյանին. «Հեյ պարոններ, ակա՛նք արեք, // Մի բան պատմեմ հիմի ձեզ, //Տեսեք խոսքս ու թ է գնում //Քաջ որսկանի գլուխի պես»:

Օրինակ չորրորդ. Այս հոետորական քայլը, իմ հարգարժան ընթերցողներ, ես առաջին անգամ եմ տեսնում: Սա նոր բան է: Հավատացնում եմ Ձեզ, որ ես քիչ գրականություն կարդացած չկամ, գիտեմ խոսքի, մեկ նախադասության, բառակապակցության, բառի արժեքը, բայց որ մեկ տառ բարձրանա ութերորդ հորիզոնական, այսպիսի բան չեմ տեսել: Հիշում եք մալիսի 8-ի բանավեճը Հանրապետական կուսակցության անդամի հետ, ով խոսում էր իշխանական գլխարկի ծանրության, Փաշինյանի «փորձի բացակայություն» մասին: Կարծես թե Փաշինյանը չէ, ով 15 տարի զբաղված է միայն իրենց ուկորները ջարդելով, գլխուղեղի դերին հավանդող նրանց ողնուղեղը ցրվել տալով: – Ոչ, – ասում է Փաշինյանը, – ծանր չէ այդ գլխարկը, որովհետև մենք ունենք մեր

«Ժողովուրդը անհամբեր սպասում է, վիրահատարանի դռները բացվում են և դուրս է գալիս բժիկը, ուռուցքը հեռացված է...»

Բարև բժիշկ... Բարև Ձեզ Իմ անունը ժողովուրդ ա և ես հիվանդ եմ բերել, օգնեք խնդրում եմ: Բհարկե, ասաց բժիշկը և հարցրեց, իսկ ոնց դիմեմ հիվանդին: Հայաստան... նրա անունը Հայաստան է, ասեց ժողովուրդը: Բժիշկը զարմացած հարցրեց, իսկ ինչու եք այդքան ուշ բերել հիվանդին, իրա վիճակից երևում է, որ նա տարիներ շարունակ զարգացող խնդիրներ ուներ: Ժողովուրդը մեղավոր հայացքով նայեց բժիշկին և ասաց, Հայաստանը տարիներ շարունակ ասում էր, որ առողջական խնդիրներ ունի, բայց ես մտածում էի կանցնի, մի օր կդգվի, բայց նա օրեցօր վատանում էր և երբ վիճակը ծայրահեղ դարձավ, էլ չդիմացա քայլ արեցի և բերեցի ձեզ մոտ: Բարի ժողովուրդ ջան, ասաց բժիշկը, հիմա կգնեն, հասկանանք, թե ոնց ենք անելու, բայց կարծում եմ նա ուռուցք ունի, պետք է վիրահատել: Ժամեր անց... «Ժողովուրդը անհամբեր սպասում է, վիրահատարանի դռները բացվում են և դուրս է գալիս բժիկը՝ ուռուցքը հեռացված է, Հայաստանի կյանքին վտանք չի սպառնում, քանի որ դուք ուշ եք բերել հիվանդին, հիվանդությունը խորացել էր, հիմա պետք է զինվել

համբերությամբ, քանի որ վերականգնողական փուլը ժամանակատար է, գրեթե բոլոր օրգանները փասված էին, բայց դա կուղղվի, միայն թե հույս ու հավատը չկորցնես, ասաց բժիշկը: Դու պետք ա իրան օգնես, որ նա արագ վերականգնվի, նա պետք ա զգա քո հույսը, սերը, հավատը... այլ պարագայում այդ վերքերը կխորանան: Վաղը դուրս կգրենք և կգնաք տուն, ասաց բժիշկը: Հա մեկ էլ մի բան, ժողովուրդ ջան, չլսես սնվելներին, նրանք քեզ տարբեր բուժման եղանակներ են առաջարկելու, քարկոծելու են վիրահատական մեթոդները, պատմելու են բազմաթիվ բուժված հիվանդների մասին, բայց իրանց մեթոդները օգտակար չեն եղել տարիներ շարունակ և հիմա էլ չեն օգնի: Իսկ հիմա գնացեք, անհոգ եղեք, աշխատեք հիվանդին մենակ չթողնել, կանչեք արտասահմանից Հայաստանի բոլոր հարազատներին, որ մենակ չլինի, ամեն օր լցրեք իրա կյանքը դրականով և ամենակարևորը, երբեք չհուսահատվեք... Ժողովուրդը լուռ լսեց և ասեց՝ ես էլ երբեք իրան մենակ չեմ թողնի...

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

120

ժողովրդի աջակցություն-Ը՝ և մեր ժողովրդի վստահություն-Ը՝ հասկացնելով, որ իր հակառակորդները չունեն Ո՛Չ ժողովրդի վստահություն-Ը՝, ոչ էլ ժողովրդի աջակցություն-Ը՝: Հիրավի, այսպիսի ոչնչացնող տառից հետո թատերաբեմում միայն քաղաքական դիակներ էին ժապու, ինչն էլ և տեղի ունեցավ:

Օրինակ հիսգերորդ. Փաշինյանը իր ելույթներում հաճախ է օգտագործում գեղարվեստական պատկերավոր խոսքեր, վերցրած հայկական, սովետական ու համաշխարհային գրականության դասականներից, կինոյից ու արվեստից: Այս առումով Հայաստանի նախորդ պետերը դրսևորել են իրենց որպես չորուցամաք խոսքի կարկառուն դեմքեր:

Փաշինյանը չի՝ օգտագործում օտարածին ու դժվարամարս բառեր, նա Թումանյանի արժանի աշակերտն է, ով իր միտքը պարզ խոսքով է ասում, իրեն չի կոտորում գիտական, մասնագիտական տերմիններ փնտրելով, ինչպես Ռուսաստանի Դաշնության քաղաքական դաշտի Քաջ Նազար, կառավարության հանգուցյալ նախագահ Եգոր Գալդարը իր հայտնի «инфляционные ожидания» ու նմանատիպ տերմիններով, ով այսպիսի ու նմանատիպ բառերով պարբերաբար մեխ էր խփում սեփական կարիերայի ու հեղինակության դագաղներին: Փաշինյանի խոսքը Թումանյանի խոսքի նման պարզ է ու հստակ, հարուստ մեջբերումներով ամենատարբեր դասականներից (Օրինակ. «Мая неастрономия!!!», «Նաջարյանի ասածը Ձեզ համար ինչ նշանակություն ունի...», Կիկոսի պատմությունը և այլն): Բնութերնեղ լիքն է Փաշինյանի ելույթներով, հարգարժան ընթերցողը կարող է տեսնել գեղարվեստական պատկերավոր խոսքի ուժը նրա ելույթներում:

Թող ունաք չմտածեն, թե ես դրական խոսք ասելով Հայաստանի այսօրվա ղեկավարի հասցեին, միաժամանակ ուզում եմ քար

շարտել նախորդների բանջարանոցները, մտածեն, թե «մեռած առյուծին» քացի տալը հեշտ բան է: Աստված մի արարեց, ես այդպիսի նպատակ չունեմ, այստեղից նախ առյուծի հոտ չի գալիս, հետո էլ նրանք արդեն իրենց գործունեությամբ Հայաստանը հասցրել են կործանման եզրին ու նրա նց գործունեության հետևանքով է, որ Հայաստանի բանակում ցեղի նման բազմացել են զինվորի պահածո («հայերեն» տուշոնկա) ու ներքին սպիտակեղեն գողացող սպաները, ու որոնք, իմ խորին համոզմամբ, նույնիսկ Փաշինյանի հրամանով, մեկ ակնթարթում մարդ չեն դառնա:

Բայց վերադառնանք, ինչպես ասում էին անցյալի մեծերը, մեր ոչխարներին:

Հայտնի բան է, որ այն ազգը, ով չունի գրագետ ու հայրենասեր երիտասարդություն, կամ մեռած է, կամ էլ ապրելու է ողորմելի կյանքով: Ուստի ես այս եղովածով առաջին հերթին կոչ եմ անում մեր երիտասարդությանը, ու հատկապես մեր ուսանողությանը, լրջորեն ուսումնասիրել վարչապետ Փաշինյանի ելույթները բոլոր ատյաններում, սովորել նրանից ու դրա հիման վրա մշակել սեփական խոսքի արվեստը սեփական դիմագծերով: Նրանից սովորել ճշմարտության աչքի ն նայելու ու ճշմարիտ խոսք ասելու առանց վախենալու, չնայած երբեմն ճշմարիտ խոսքն ասելը կարող է շատ թանկ նստել: Ու հիշել էլ պետք, որ երկիրը երկիր է դառնում ոչ միայն բարձր մակարդակի արդյունաբերությամբ, գյուղատնտեսությամբ ու գիտությամբ, այլև առաջին հերթին ԳՐԱԳԵՏ, ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ու ՀԱՄԱՐԶԱԿ մարդկանցով:

Դարակական կայսրության հիմնադիր, Կոստան Երկրորդ Մեծը որոշել էր, որ իր երկրում երիտասարդը առաջին հերթին պետք է կարողանա անել երեք բան. ա) լավ ձիարշավել, բ) լավ տիրապետել նետաղողին, ու երրորդը գ) ՃԲՇՏ ԽՈՍԵԼ (првады роворитъ): Եվ դա պարանկան չէր: Ճիշտ ու բարգավաճ ապրելակերպին հասնելու համար ճիշտ որոշումներ է անհրաժեշտ կայացնել բոլոր մակարդակի

կառույցներում, իսկ ճիշտ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է ճշգրիտ ինֆորմացիա ու ճշմարտախոս մարդ, իրավիճակը ճիշտ գնահատելու համար: Ճիշտ որոշումներով էր, որ Հին աշխարհից մինչև միջնադար պարսիկները միշտ էլ տիրել են Հայաստանից մինչև Չինաստան տարածքները: Նույնիսկ այն ժամանակ, երբ արաբները կոտրեցին Սասանյանների ողնաշարն ու ստիպեցին պարսիկներին Բալան ընդունել, պարսիկները գոյության կռվի մարտադաշտ դուրս բերեցին այնպիսի դեմքերի, այնպիսի հսկաների, ինչպիսիք էին Ռուդակին, Ֆիրդուսին, Հաֆեզն ու Խալամը, իրենց լեզուն ու մշակույթը վերածնեցին ու կայացրեցին որպես ինքնահաստատման արգումենտ: Իրենց միջով անցկացնելով նոր կրոնը, վերափոխեցին նրան, տալով նրան իրանական դեմք (շիհվ): Ավելորդ չի լինի հիշեցնել, որ Հնդկաստանում հաստատված Բաբուրի Մեծ Մողոլների կայսրությունում մինչև անգլիացիների նվաճումը պաշտոնական լեզուն Ֆիրդուսու քաղցրանուշ պարսկերենն էր: Եվ այսօր էլ նույն այդ կրոնը օգտագործելով որպես քաղաքական ու գաղափարախոսական հզոր լծակ, արդեն քառասուն տարի է, որ դիմապակում են Ամերիկայի նման հզոր պետության ագրեսիվ քաղաքականությանը:

Այնպես որ մե նք էլ պետք է սովորենք պահպանել ու ամրապնդել մեր երկիրը մեր մեծ հարևանների նման, մեր լեզուն դարձնելով մեծ լծակ այդ գործում: Ու ինձ թվում է, որ եկել է ժամանակը ողջ հայության համար մշակել մեկ ուղղագրություն, մեր ՄԵԾ ու Աստվածատուր լեզուն առավել հեշտությամբ տիրապետելու, Հայաստան-Սփյուռք կապերն ամրապնդելու ու հայրենադարձությունն իրագործելու համար: Թե չէ այսօր Արևմտահայերենը Հայաստանի ու նախկին ՄՍՀՄ-ի հայության համար փաստորեն օտար լեզու է ու նրանով ստեղծված ու ստեղծվող մշակութային արժեքները անհասանելի են Մայր Հայրենիքի ժողովրդին:

Բայց սա արդեն մի քիչ ուրիշ թեմա է:

Սամվել ՄԿՐԱԼՅԱՆ

Թե ինչպես Տերյանը փրկեց Էջմիածնի գանձերը

Այս փոքր-ինչ խորհրդավոր ու զարմանալի պատմությունը ծայր առավ 1914 թվականի ձմռանը, երբ Սարիղամիշի մոտ իրար բախվեցին ռուսական ու թուրքական բանակները: Մեծ էր վտանգը, որ ռուսների անհաջողության դեպքում Էջմիածնի փաշայի հրոսակները կարշավեին մինչև Երևան: Եվ վերահաս աղետից տագնապած՝ Ամենայն Հայոց Հայրապետ Գևորգ 5-րդը կայացնում է ծայրահեղ մի վճիռ: Նա իր մոտ է հրավիրում եկեղեցու բարձրագույն հոգևորականներին և առաջարկում է Էջմիածնում պահվող բոլոր ձեռագիր մատյաններն ու թանկարժեք իրերը շտապ կարգով տեղափոխել Մոսկվա:

Որոշումն անսպասելի էր, տեղի ընտրությունը՝ առավել նա: Մասկայն կաթողիկոսին հաջողվում է հիմնավորել, որ այդ պահին դժվար է գտնել առավել ապահով վայր: Ու սկսվում է Էջմիածնի գանձերի տեղափոխման գործողությունը: Գլխավոր պայմաններից մեկն էր ամեն բան անել խստագույն գաղտնիության պայմաններում: Բոլոր իրերն ամփոփվում են 147 խոշոր արկղերի մեջ ու կնքվում վեհափառի կնիքով: Այնուհետև դրանք տարվում են կայսրան և երեք վատահեղի մարդկանց հսկողությամբ ճանապարհ են ընկնում դեպի Ռուսաստան:

Թանկարժեք բեռը Մոսկվա է հասնում 1915 թվականի փետրվարին: Այնտեղ գործող հայկական կոմիտեի անդամներն արդեն տեղեկացված էին և անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ էին ձեռնարկել: Դրանցից հիմնականը քաղաքում հարմար ապաստարան ընտրելու հարցն էր: Երեք հնարավոր տարբերակներ էին առաջարկվել, բայց երբ հեռագրով հարցում էին կատարել Գևորգ 5-րդ կաթողիկոսին, վերջինս կտրականապես դեմ էր եղել արկղերը պահ տալ որևէ մասնավոր շինության մեջ և պատվիրել էր դրանք հանձնել Մոսկվայի Սուրբ Խաչ հայկական եկեղեցուն:

Բարեբախտաբար, գրավոր աղբյուրներում պահպանվել են այն մարդկանց անունները, ովքեր անմիջական մասնակցություն ունեցան հայկական մշակութային արժեքների փրկության գործին: Այդ ցանկն ընդարձակ է: Նշենք միայն նրանցից երկուսի անունը՝ Մոսկվայի հայկական կոմիտեի անդամ Ալեքսանդր Թորոսյան-Տարասովը՝ աշխարհափառ գրող Մնրի Թրուսայայի պապը, և նկարիչ Մարտիրոս Մարյանը: Նրանք ևս կայսրանում էին, երբ տեղ հասավ գնացքը:

Մեծ թվով կառքեր էին վարձվել: Յուրաքանչյուր կառքում դրվում էր մի քանի արկղ, իսկ տեղի հայկական գաղութի երկուական անդամ պիտի բեռի հետ գնային մինչև եկեղեցի:

Սուրբ Խաչում եկեղեցական գանձերը պահպանելու համար առանձնացվել էին երկու խորանները: Նախապես դրանց համար պատվիրվել էին պողպատե ամուր դռներ, բոլոր պատուհաններն արդեն կրում էին մետաղե փեղկեր: Ու երբ բոլոր արկղերն ի վերջո անժամա տեղ հասան, դռները կնքվեցին, ու սկսվեց երկարատև պահպանության ժամանակը:

Այն մոսկվաբնակ հայերը, ովքեր գիտեին դրա մասին, գիշերները քահանաների հետ հերթապահում էին եկեղեցու մոտ: Երկու ամիսը մեկ անգամ խորանների դռները բացվում էին մի քանի ժամով՝ ձեռագրերը խոնավությունից փրկելու նպատակով: Իսկ




Մոսկվայի Սուրբ Խաչ եկեղեցին, որտեղ թաքցրել էին Էջմիածնի գանձերը

դրսի աշխարհում կատարվում էին աշխարհացունց իրադարձություններ: Գլխավորապես հեղաշրջումը հաղթանակ էր տարել, եկել էր նոր իշխանությունը, և այդ նորերի շարքում էր նաև Պողոս Մակինցյանը, ով նշանակվել էր ՌՍԲՄՀ ազգությունների ժողովատուում հայկական գործերի ժողովուրդի տեղակալ: Էջմիածնից բերված 147 արկղերի մասին նա չէր կարող չիմանալ:

Եվ ահա մի օր լուր տարածվեց, որ Մակինցյանը որոշել էր հայ եկեղեցու հարստությունը դուրս բերել Սուրբ Խաչ եկեղեցուց ու տեղափոխել Մոսկվայի Ալեքսանդր Երրորդ կայսեր թանգարան (ներկայիս Պատմության պետական թանգարան): Տեղեկությունը բուռն հուզմունքների ու զայրույթի պատճառ դարձավ հայերի շրջանում: Բոլորն էլ հրաշալի գիտակցում էին, որ դա բացահայտ ոտնձգություն է ազգային արժեքների դեմ, և



Պողոս Մակինցյան



Վահան Տերյան

որոշեցին դիմադրել:

Հրավիրվեց հատուկ ժողով: Վճռեցին, որ բոլորը մեկ մարդու պես ոտքի կկանգնեն ու կպաշտպանեն Էջմիածնի գանձերը: Բայց մինչ այդ նպատակահարմար գտան մի փոքրիկ պատվիրակություն ուղարկել նրա մոտ և առաջարկել հեռու ժամկետով պահպանել արկածախնդրությունից: Եվ ընտրված 5 պատվիրակներն ուղևորվեցին Մակինցյանի բնակարան: Եվ հենց այստեղ էլ երջանիկ պատահականությունն օգնության հասավ անելանելի իրավիճակին:

Դեպքի ակնառատն Արսեն ավագ քահանա Միմոնյանը պատմում է, որ Մակինցյանի տան մուտքի մոտ նրանք հանդիպում են բանաստեղծ Վահան Տերյանին: Ինչպես հայտնի է, Տերյանը ոչ միայն Մակինցյանի մտերիմ ընկերն էր, այլև այդ օրերին Համառոտաստանյան ազգությունների ժողովխորհրդի՝ հայկական գործերի գծով խորհրդականն էր: Լսելով այցելության նպատակի մասին՝ բանաստեղծը մյուսների հետ ներս է գնում: Ընդունելով անսպասելի հյուրերին, Մակինցյանը կրկին հաստատում է իր որոշումը՝ ասելով, թե իբրեկեղեցին խիստ անապահով վայր է, պահվող իրերը կարող են հափշտակության ենթարկվել, գրչագրերը կարող են խոնավությունից փչանալ, մինչդեռ նա կամենում էր հայ ազգի մշակույթի այդ նշանավոր հիշատակարանների հետ ծանոթացնել ռուս բանվորությանը և գիտական աշխարհին, և այդ նպատակով մտադիր է տանել թանգարան ու նույնիսկ հայագետ Նիկողայոս Ադոնցին ձեռնասկզբի ձեռագրերի բաժանմունքի վարիչ:

Հերթը Տերյանին էր: Վերջինս անցնում է հակազդոնքի և սկսում է հակափախուսարկների մի ընդարձակ շարք թվարկել՝ սկսած նրանից, որ հայ ժողովրդի սեփականությունը չի կարող դառնալ օտար երկրի ունեցվածք, և վերջապես այն բանով, որ գերմանական գործերն անցել են հակազդոնքի ու կարող են նաև Մոսկվան գրավել: Արսեն քահանան

Առաջին հայկական լրատվական գործակալությունը ստեղծվեց մեկ դար առաջ



Այս տարի մեզ համար հարյուրամյա հոբելյանների տարի է մայիսյան հերոսամարտերը, Առաջին հանրապետության հռչակումը, առաջին խորհրդարանը: Այս շարքում նշվում է նաև Հայաստանում ստեղծված առաջին պետական լրատվական գործակալության մեկդարյա հոբելյանը, որի իրավահաջորդը ներկայումս «Արմենպրես» գործակալությունն է համարվում: Նշենք, որ այս փաստը խորհրդային տարիներին փակի տակ է եղել, քանի որ այն ժամանակ ամեն ինչի սկիզբ ընդունված էր համարել միայն այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունեցել արդեն 1920 թվականի դեկտեմբերի 2-ից հետո, այսինքն՝ Հայաստանի խորհրդայնացումից սկսած:

Հայկական պետական լրատվական գործակալություն հիմնելու գաղափարը առաջացավ 1918-ի դեկտեմբերի սկզբին, երբ սկսվեց հայ-վրացական պատերազմը: Այդ օրերին խիստ անհրաժեշտություն կար պատերազմի մասին տեղեկատվությունը արտաքին աշխարհին կանոնակարգված կերպով ներկայացնել հենց անմիջապես Երևանից: Մինչ համապատասխան ծառայության ստեղծումը, ողջ լրահոսը ստացվում էր այսպես կոչված

«Կավրոստա»-ից, որի կենտրոնակայանը գտնվում էր Թիֆլիսում և որը նախկինում Ռուսաստանի հեռագրական գործակալության անդկովկասյան բաժանմունքն էր հանդիսացել, իսկ հետո շարունակում էր աշխատել որպես Անդրկովկասի ընդհանուր հեռագրական գործակալություն:

Հայաստանում նոր լրատվական գործակալություն ստեղծելու նախագծի մշակումը վարչապետ Հովհաննես Քաջազունու կողմից հանձնարարվեց Առաջին հանրապետության ականավոր պետական գործիչ Սիմոն Վրացյանին, որն էլ սեղմ ժամկետներում կարողացավ դա իրականացնել: Պատմական փաստերը վկայում են, որ գործակալության մասին որոշման նախագիծը Սիմոն Վրացյանը ներկայացրել է 1918 թվականի դեկտեմբերի 18-ի պառլամենտի Հայաստանի խորհրդի նիստին, որն էլ և հաստատվել է: Այդ հրամանագրով բոլոր գերատեսչությունները պարտավորվում էին տեղեկատվություն տալ բացառապես ստեղծվող պետական նոր լրատվական գործակալությանը, և արգելվում էր այն տրամադրել տարբեր կազմակերպություններին կամ մասնավոր անձանց՝ նախքան գործակալության լուր-հաղորդումների պաշտոնական տարածումը:

Կառավարությունը նորաստեղծ լրատվական գործակալության համար հաստատում է համապատասխան հաստիկացուցակ և հատկացնում առանձին գրասենյակ Երևանում: Հայտնի է, որ «Հայհեռագործ»-ի («Հայաստանի հեռագրական գործակալություն») առաջին ղեկավարն ու աշխատակազմի ձևավորողը դարձավ հենց ինքը՝ Սիմոն Վրացյանը, ով բացի նրանից, որ տիրապետում էր մի քանի լեզուների, նաև փայլուն և ճանաչված հրապարակախոս էր: Եվ ահա, 1919-ի հունվարի 15-ին, նախօրոք այդ մասին ծանուցելով բաժանորդներին, «Հայհեռագործ»-ը թողարկում է իր առաջին պաշտոնական հեռագրային ժապավենը, որն ընդգրկում էր 22 կարճ լուր: Դրանք ուշագրավ տեղեկություններ էին Առաջին հանրապետության առօրյայի, պետական շինարարության, ազգամիջյան հարաբերությունների մասին, և այլն:

Ռուբեն ՇՈՒԽՅԱՆ

◆ Գերմանացի մի հնախույզ հետաքրքրվում է հնագիտական արժեք ունեցող իրերով: Երբ Էջմիածնում նրան ներկայացնում են Խրիմյանին, վերջինս դիմում է թարգմանչին:

– Ըսեք, որ ես թանկագին հնություն մը ունիմ, քանի՞ տարվան կենթադրեք:

– Հինգերորդ դարի, – փորձում է գուշակել հնագետը:

– Անկեց ալ հին, – հուշում է կաթողիկոսը:

– Քրիստոսի ժամանակաշրջան:

– Անկեց ալ հին:

Հնախույզի աչքերը վառվում են հետաքրքրությունից, որ աստիճանաբար փոխվում է ոգևորության:

– Տեսնեմ Վեհափառ, ի նչ է այդ թանկագին հնությունը:

– Իմ ազգս է, – կշտամբող շեշտով պատասխանում է Խրիմյան Հայրիկը, – Քրիստոսն ալ հին, Մովսեսն ալ, իմ թշվառ ազգը:

Անտեսած այս թանկագին հնությունը՝ հին քար մը կամ առաարկա մը փնտրելու կելլեք:

◆ Հին Հռոմում ամեն անգամ, երբ Կեսարը պատրաստվում էր Օբերա-կույտի (Սենատի) շենք մտնել, նրա գլխին դափնեպսակ դնողը ինչ-որ բան էր շնչում Կեսարի ականջին...

Նեոտ, երբ նրան հարցնում են, ի՞նչ ես քչփչում աշխարհակալի՝ Կեսարի ականջին, դափնեպսակ դնող ստրուկը պատասխանում է.

– Ես Կեսարի խնդրանքն եմ կատարում...

– Կեսարի ... – զարմանում են հետաքրքրվողները...

– Կեսարը ի՞նչ կարող էր խնդրել ստրուկից.

– Ամեն անգամ՝ դափնեպսակը նրա գլխին դնելիս, ես նրա ականջին շնչում եմ. – Հիշի՞ր, դու տովորական մահկանացու ես, Աստված չես...

Այդ հիշեցումն էր խնդրել Կեսարը ստրուկից:

140

այսպես է վերհիշում բանաստեղծի խոսքերը. «Հիրավի, Պողոս, մեր ձեռագրերի համար ամենից ապահով վայրը հայոց եկեղեցին պետք է համարել, որովհետև տալտա տեղ է, ու ոչ ոք նրա վրա ուշադրություն չի դարձնում, նույնիսկ գերմանացիք, եթե Մոսկվան գրավելու լինեն:

Ես էլ կարծում եմ, որ թողնենք առայժմ այնպես, ինչպես կա, և ոչ մի տեղ չտեղափոխվենք»:

Պետք է նկատել, որ Տերյանը Մակինցյանի վրա մեծ ազդեցություն ուներ: Եթե Մակինցյանի աչքի էր ընկնում իր անգուստ բնավորությամբ, ապա հավասարակշռված Տերյանը գրեթե միշտ կարողանում էր գտնել ճիշտ փաստարկները և տարհամոզել ընկերները: Նույնն էլ կատարվեց այս դեպքում:

Տեղի տալով ձնշուժներին՝ Մակինցյանը համաձայնեց, որ արկղերը ժամանակեղանակ, թեև առաջարկեց, որ դրանք կնքված լինեն նաև Համառոտական գործադիր կոմիտեի առաջին քարտուղարի կնիքով: Իսկ դա չարյաց փոքրագույնն էր:

Դժբախտաբար, Վահան Տերյանին վիճակված չէր ապրել մինչև այն օրը, երբ իր օգնությամբ փրկված գանձերը կրկին պիտի ճանապարհ ընկնեին դեպի Հայաստան: Ըստ տեղեկությունների՝ 1922 թ. ապրիլին Մոսկվայից Հայաստան հասավ 4060 ձեռագիր: Այս անգամ բոլոր իրերը գետեղվել էին հատուկ այդ նպատակով պատրաստված թիթեղապատ 137 սնդուկների մեջ: Կան պնդումներ այն մասին, թե նախկին 147 արկղերից 30-ն այդպես էլ անհետացել էին, և, որ դրանց մեջ եղել էին ամենաթանկարժեք իրերը: Թե հատկապես

ինչ էր կորստյան մատնվել, հստակ տեղեկություն չկա:

Փոխարենը 1923 թ. սեպտեմբերի 5-ին «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակվեց այսպիսի մի հաղորդագրություն. «1914 թվի տաճկական արշավանքի ժամանակ Մոսկվա տեղափոխված Էջմիածնի նախկին մատենադարան-թանգարանի ձեռագրերն ու հնությունները, որ վերջերս տեղափոխված էին Երևան և տեղադրված թանգարանում, Լուսժողովուրդ կարգադրությամբ օգոստոսի 30-ին տեղափոխված են Էջմիածնի գիտական ինստիտուտի մատենադարանը: Հնություններն եղել են 140 արկղ, որոնցից բացվել է 1-ը, որը պարունակում էր իր մեջ Այվազովսկու նկարները, որոնք կախվել են թանգարանի պատկերասրահում»:

Յուլիա ՉԱՐԻՉՅԱՆ

Ֆլորա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևի դու էլ
Սիրելիս, գիտես,
Որ ես ուզում եմ
Միշտ լինել քեզ հետ:
Իմացիր նաև,
Որ ես ուզում եմ
Ոչ միայն լինել
Քեզ կյանքի ընկեր,
Այլ՝ կերոն ճամփիդ,
Որ չմոլորվես
Մթուքյան խորքում՝
Չարիքներ ծնող:
Այն էլ կուզենամ՝
Հանկարծ չխաբվես,
Եթե մի թույլ լույս,
Մի շող նշարես:
Կուզենամ նաև,
Որ ես էլ քեզ մոտ
Բերող կածանը
Լուսավառ տեսնեմ,
Որպեսզի հոգուս՝
Քեզ համար պահված
Չխամրած լույսը
Հանկարծ չմարի:
Չէ՞ որ առանց լույս
Կյանքն իմաստ չունի...
Եղիցի՜ լույս:
27.10.1978

Լինե՛ր այնպես,
Որ հրաշքով,
Միանգամից
Ես ծնվեի՝
Նոր ու նորից՝
Սիրաբորբոք
Առաջվա պես:
Ու զարթոնքով
Հեքիաթային
Այնպես լինե՛ր,
Որ զորություն
Ունենայի,
Այդ հրաշքին
Ու քեզ, սեր իմ,
Հավատայի...
02.01.1979

Ցանկանում եմ, ճի՛զ եմ թափում
Ատել ես քեզ:
Ու, թվում էր՝ ստացվում է
Ինձ մոտ առանց մեծ ջանքերի,
Բայց, շա՛տ իզուր...
Ես խոր ցավով նախագգում եմ,
Որ անգոր եմ քեզ ատելու,
Եվ չեմ կարող,
Ինչպես ուրիշ շատ անուններ,
Քո անունն արտասանել
Խաղաղությամբ...
04.01.1979

Տեսնում եմ ես քո
Աչքերը միշտ ջիմջ
Եվ ցավով զգում,
Որ այդ սիրելի
Աչքերը երբե՛ք

Ինձ չեն նկատել:
... Թե՛ նկատել եմ՝
Ես չեմ նկատել...
07.01.1979

Նստած խորհում եմ՝
Մտքերիս հակված,
Դառը կսկիծով
Ձգում եմ, ավա՜ղ,
Որ արդարությունն
Եղել, երևի
Այդպես էլ մնա,
Որպես մի ունայն
Ու թույլ երևույթ:
Տեսնես մինչև ե՞րբ
Նա կհալածվի:
Ո՞ր զգամ արդյոք,
Չայն հանեք, մարդիկ,
Նրա թաքուստի
Տեղն իմանամ,
Գնամ դեպի այն,
Գնամ ծնկաչոք՝
Առանց տատանման:
Ասացե՛ք, ո՞րն է
Դեպ արդարություն
Հասցնող ճամփան...
03.08.1979

ՀՈՍՈՒՄ Է ՊԵՏԸ

Միալար ու հանդարտիկ,
Չայնակցելով ասես
Իմ ներքին ծայրին՝
Հոսում է դանդաղ
Մեր տան դիմաց
Գետը մայրենի:
Նրա խշշոցը,
Ուղեկցվող քաղցր,
Հին անուրջներով,
Արթնացնում է մի պահ
Իմ հոգու խորքում
Հուշեր՝ կարոտյալ:
Այդ իսկ պատճառով
Հենց որ մտնում եմ
Գետին հետևող
Սենյակն իմ լռին,
Կամքիցս անկախ
Քայլում եմ դեպի
Ջրերին նայող
Բաց պատուհանը,
Որ նորից հմայվեմ
Նրա կախարդիչ ու
Հուզիչ տեսքով:
Դու՛ իմ սիրելի,
Նույնիսկ այս գետի
Արտացոլքի մեջ
Ես քե՛զ եմ փնտրում,
Նրա խշշոցում՝
Քո ծայրը լսում,
Ու շատ ժամանակ
Երբ հիշում եմ քեզ,
Սկսում եմ զրուցել
Թաքուն գետի հետ:
Ինձ ընկերացած
Գետակն էլ ասես,
Ունկնդրելով մտորումներիս,
Համամիտ միշտ ինձ,
Գաղտնի խոհերիս՝
Արագացնում է
Ընթացքն իր հոսքի:
Տեսնում ե՛ս, հոգիս,

Որ դու ինձ հետ ես,
Եվ մենակ չեմ ես:
Դա է հաստատում
Նաև մեր գետը:
...Հոսում է գետը
Իմ հուշերի հետ:
28.09.1979

Նորից թախծ է
Իջել իմ հոգուն,
Նորից տիրաբար
Ամպի մի քուլա
Կախվել է կարծես
Իմ գլխի վրա:
Նորից ուզում եմ
Խախտել անդորրը
Խաղաղված հոգուս:
Բայց, ով իմ Աստված,
Թող որ ինձ ուժ տան
Անդուլ պայքարի՝
Իմ հոգու տերը,
Իմ անխախտ սերը,
Որ ես չընկճվեմ,
Չթեքեմ երբե՛ք
Գլուխն իմ հպարտ
Դեպի ուրիշ մարդ:
Բռնակալ իմ սեր,
Իշխիր դու հոգուս,
Թևածիր, ինչպես
Բարի հրեշտակ,
Շուրջ-բոլորս միշտ:
Թևածի՛ր, սեր իմ,
Այդ թևածումը
Քեզ է պետք գալու,
Ես գիտեմ հաստատ.
Դու էլ իմացիր...
23.10.1979

ՀԱՅԱՍՏԱՆԻՍ

Վաղուց ի վեր անրջել եմ քո մասին,
Մանկուց ի վեր փայփայել ամուսնը քո,
Դու՛ իմ սրտի անջինջ հատոր,
Ու միշտ հպարտ, իմ Հայաստան:

Քո խոնջացած բազուկները լայն տարածիր,
Որ նրանց մեջ առնես սիրով մի զավակ էլ
Խորհուրդդ տա քո խելիմաստ սուրբ բարքերով
Նրա հոգուն հայրենատենչ, կարոտալի:

Եվ ջերմորեն գիրկդ առնես
Մի սիրատենչ, մի սիրաբեկ ու կույս աղջիկ,
Որ գալիս է՝ անմնացորդ նվիրվելու
Գորովանքով իրեն գրկող հայրենիքին:
25.12.1979

Անց կացար, սեր,
Դու իմ մոտով,
Եվ անցնելուդ պահին
Ինձ չնայեցիր:
Թե նայեիր,
Կտեսնեիր
Անզուսպ տագնապով
Լցված հայացքս:
Իմ այդ հայացքը
Ինչո՞ւ չզգացիր,
Ու թե զգացիր,
Ինչո՞ւ լուռ անցար՝
Առանց նայելու
Սիրառատ դեմքիս:
Ա՛խ, անգործն
Ինչո՞ւ թողեցիր,
Որ անցած ճամփադ
Առատ ցողեի
Իմ արցունքներով՝
Ո՛չ էժանագին:

Ինչո՞ւ գնացիր,
Ինչո՞ւ թողեցիր:
02-03.02.1980

Եվ նորից դու ես,
Քեզ եմ սիրելիս
Նորից ես տեսնում
Տղաների հոծ
Բազմության միջին,
Հո՛ծ փաթիլների
Չյունե թավիշից
Դու՛ ես երևում
Դարձյալ իմ աչքին,
Իմ աչքին՝ ոչինչ, ոչինչ
Չտեսնող ու չնշարող՝
Քո տեսքից բացի:
Իմ սիրտը վառվող
Վա՛ղուց է կարոտ
Քնքու՛շ քո խոսքին,
Իմ աչքը փնտրող
Վա՛ղուց է կարոտ
Ծանոթ քո տեսքին,
Եվ իմ ունկերը՝
Քո քայլի ծայրին,
Որ միայն ինձ մոտ,
Ինձ մո՛տ եմ ուզում
Նա միշտ քեզ բերի,
Իսկ, թե չբերի,
Ա՛խ թե չուզենաս,
Մոլոր քայլերով
Ինձ այցի կգաս:
Գեթ մոլոր քայլով
Թո՛ղ քեզ ունենամ...
23.02.1980

- ◆ Ապստամբ ժողովրդին միայն Աստուած կարող է յաղթել:
- ◆ Յուրաքանչյուր ազգի պարտականությունը մարդկության հանդեպ նախ և առաջ դրսևորվում է սեփական ազգի կենսունակության պահպանման և սեփական մշակույթի զարգացման ձևով:
- ◆ Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի եւ մահվան առջև, հաղթական հայրենիք չի ունենա:
- ◆ Հայրենիքից գաւտ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:
- ◆ Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից, եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք:

Պարեգին ՆՇՂԵՅ

Մարո

ԵՐԿՆԱՓԵՇՅԱՆ

Ես տեսա երկնքի
Ու երկրի սիրախաղը,
Հողի տաք զրգիռը
Քարքարոտ լանջերին,
Երբ ոտքով բարձրացա
Մեծ գյուղի մեր թաղը,
Մուրազս պատմելով
Ձնհալի ջրերին...

Ես տեսա ծառերի
Սրբաթթան արթնացումը,
Անձրևի ծալիտը
Մի հատիկ կաթիլում,
Ես տեսա և լույսի
Շեշտակի թափանցումը՝
Դողացող կորիզի
Ամեն մի շաքիլում...

Ես տեսա հողի
Այն ներքուստ հրճվածքը,
Երբ խաղաց պտուղը
Կոնքերի արանքում,
Ես տեսա շրթունքի
Արնագույն նեղ ճաքը
Երկունքի ցավից ու
Բերկրանքից էր անկում...

Ես տեսա, ետ գնաց
Ամպերի հաստ փառը,
Աչքերից ճառագեց
Արևը տաք, պայծառ,
Երբ ասի՝ մամ ջան,
Միտք բամբակ այս բառը,
Մի քանի մանուշակ
Պտղունցով լուռ պարզած...

Մի քիչ էլ բեր ոտքս
Կախ գցեմ ու գնամ,
Գարուն գա արևոտ,
Շաղ գցեմ ու գնամ,
Բացատում՝ մասրենու
Մամիկենու թիվերով
Մի պուճուր դրախտան-
Բաղ գցեմ ու գնամ...

Խաղ գցեմ երգասաց
Սոխակին ու ծոփն
Ձեն- ձենի մի սիրուն
Տաղ կցեմ ու գնամ,
Երկինքն ու երկիրը,
Ասում եմ, էս ցրտին
Վեր կենամ, մի օրով
Հալ գցեմ ու գնամ...

Խառնվեմ ջրերին,
Քամուն թե՛ կրակին,
Կառ գցեմ սիրահար
Մրտերը ու գնամ,
Աշխարհի էս անհամ
Կիսանի խորակին,
Ջիգյարով, մի պտղունց
Աղ գցեմ ու գնամ...

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Վարչապետի ընդունարանը:
Մտնում է նախարարներից մեկը՝ նոթբուքով:
ՆԱԽԱՐԱՐ – (մեղմորեն թափում է դուռը, փոքր-ինչ
ծերպում): Կարելի է, պարոն վարչապետ...

ՎԱՐՉԱՊԵՏ – (ձայնը ներսից): Ո՛չ... ոչ մի դեպ-
քում...

ՆԱԽԱՐԱՐ – Բայց...

ՎԱՐՉԱՊԵՏ – Ո՛չ մի բա՛յց... Ես էլ մարդ եմ, նյար-
դերս էլ չեն դիմանում մ... Գալիս եք ու կոռուպցիա,
կաշառակերություն, թալան, առևանգում, մահա-
փորձ, չարաշահում, դավաճանություն, յուրա-
ցում, անօրինականություն, բռնություն... մեեն դը
եենե մ... էլ չեմ դիմանում...

ՆԱԽԱՐԱՐ – Բայց...

ՎԱՐՉԱՊԵՏ – Ընդունե՛ք իմ «բայցը» որպես շաղ-
կապ ասի՛ր, թե՛ ճիշդ եմ ասում:

ՆԱԽԱՐԱՐ – Ի՛նչ հապավում...

ՎԱՐՉԱՊԵՏ – Քիչ առաջ նախարարներից մեկն
եկավ, ասաց՝ «բայց», ներս թողի, պարզվեց հա-
պավում է ասել բացահայտված անօրինակու-
թյուններով յուրացման ցանկ...

ՆԱԽԱՐԱՐ – Ըմմ... իմ... իմ «բայցը» շաղկապ էր,
բայց...

ՎԱՐՉԱՊԵՏ – Ներս չգաաաա՛ս... Ես արդեն սար-
սափում եմ ճշմարտությունը լսելուց... Լավ, բա՛ն
անտեր երկրում մի արդար գործ չի կատարվել լ...
Ես, որ ամբողջ կյանքում քննադատում էի, մեկ-
մեկ էլ, ինչ մեղքս թաքցնեմ, քննադատության
դռան նվազեցնում, որ չափը չանցնեմ, վարչա-
պետ դառնալուց հետո հասկացա, որ իմ քննադա-
տությունն ու ի, իրականությունն ուր... Լավ, որ
եկել ես, ժողովրդավարական չի լինի ետ դարձ-
նելը: Ո՛ր նախարարն ես...

ՆԱԽԱՐԱՐ – Նորածինների և մանկապար-
տեզների երեխաների:

ՎԱՐՉԱՊԵՏ – Երգվիր, որ չես խաբում:

ՆԱԽԱՐԱՐ – Մորս արև:

ՎԱՐՉԱՊԵՏ – Հավատում եմ, բայց կասկածս չի
փարատվում... (բարձրաձայն խորհում է): Նորա-
ծիններից ի՛նչ պիտի ասի, որ նյարդայնանամ...

ՆԱԽԱՐԱՐ – Կուզե՛ք հենց դրան արանքից զե-
կուցեմ:

ՎԱՐՉԱՊԵՏ – Ասա:

ՆԱԽԱՐԱՐ – Անցած 100 օրում, անցած տարվա
համեմատությամբ ծվվել է 1.7 երեխա:

ՎԱՐՉԱՊԵՏ – Ո՛նց 1.7:

ՆԱԽԱՐԱՐ – Թիվը կտրացնեմ, գրեմ՝ երկու՞:

ՎԱՐՉԱՊԵՏ – Այ տղա, մենք հեղափոխություն
արինք, որ էլի հավելագրե՛նք... ոչ մի դեպքում:
Բայց... Բայց ո՛նց 1.7:

ՆԱԽԱՐԱՐ – Երեխաներից մեկը 7 ամսական է

ծնվել:

ՎԱՐՉԱՊԵՏ – Հա՛... Շտապել է օր առաջ շնչել
ազատ ու անկախ հայրենիքի օդը: Եվ ուրեմն
կեցցե՛ն մեր երեխաները, որ արդեն իսկ ապրում
են ազատ և երջանիկ Հայաստանում: Ուրի՛շ:

ՆԱԽԱՐԱՐ – Բայց... պարոն վարչապետ, մի տե-
սակ դուխով չի շնչում:

ՎԱՐՉԱՊԵՏ – Ո՛նց թե... Գեները ստուգեք, կա-
րող է թալանչիներից մեկի թողը կամ ծոռը լինի:

ՆԱԽԱՐԱՐ – Մտուգել ենք: Նպաստով ապրող,
հացի կարոտ ընտանիք էն:

ՎԱՐՉԱՊԵՏ – Բա ինչի՞ց կլինի... Դե որ ասում եմ
երկիրը քամուն են տվել, ինչու՞ պիտի անվանի
մանկաբույժը գործը թողնի, Աժ նախագահ դառ-
նա, որ մեր նորածինների շունչը անդուխ լինի:

ՆԱԽԱՐԱՐ – Անվտանգություն հայտնե՛նք...

ՎԱՐՉԱՊԵՏ – Կարելի է... Բայց մտածել է պետք
մոռը, թե՛ մանկաբարձին:

ՆԱԽԱՐԱՐ – Աժ նախագահին:

ՎԱՐՉԱՊԵՏ – Այս գործում կոռուպցիոն հիմքեր
չեմ տեսնում... Կքննարկենք: Ուրի՛շ:

ՆԱԽԱՐԱՐ – Օնդատներից հարց են ուղղել՝
նորածիններին նույնաստիպ սավաններով բարո-
րե՛ն, թե՛ հաշվի առնելով ժողովրդավարական

նորմերը եղ ֆորման վերացնենք:

ՎԱՐՉԱՊԵՏ – Լուրջ հարց է: Առաջիկա նիստի
օրակարգ մտցրո՛ւ: Մանկապարտեզներից ինչ
կա:

ՆԱԽԱՐԱՐ – Աղյալների մեծ մասը թավշյա ենք
դարձրել: Գործընթացը շարունակվում է:

ՎԱՐՉԱՊԵՏ – Կեցցե՛ք:

ՆԱԽԱՐԱՐ – Բայց պրոբլեմ կա:

ՎԱՐՉԱՊԵՏ – Էլի՛... Ի՛նչ պրոբլեմ:

ՆԱԽԱՐԱՐ – Ով թավշյա աղյալով ծածկված
քնում է՝ կամ չի ուզում արթնանալ, կամ արթնա-
նալուց հետո աշխատանքից ազատում է մանկա-

պարտեզի վարիչից մինչև պահպակ՝...

ՎԱՐՉԱՊԵՏ – Բա չեմ ասել՝ կադրերի ջարդ
չտաք...

ՆԱԽԱՐԱՐ – Զգուշացրել եմ, բայց դե...երեխա
են շատ չեն հասկանում...

ՎԱՐՉԱՊԵՏ – Վե՛րջ, ընդունելությունն ավարտ-
վեց: Դու էլ սկսեցիր բայդուշ բաներ ասել: Բայց ես
էլ մարդ եմ, նյարդերս էլ չեն դիմանում մ...

Վերջ

Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

**Յ.Գ. Շնորհակալություն վարչապետ պարոն
Նիկոլ Փաշինյանին, ում մամլո ասուլիսի ելույթը
ներշնչեց այս հումորեսկը:**

Այո, ես պարտվել եմ քանիցս,
Եւ տեսել քմծծաղի ստի,
Բայց իմ կամքը ամուր է քարից էլ,
Իմ ոգին հանձնվել չգիտի:

Երբ տեսնում եմ երկրիս տառապանքը,
Ստահող ճառողի փառքը սին,
Համոզվում եմ կրկին, որ իմ ջանքն է
Փակուղին ճեղքելու բանալին:

Նոր շունչ եմ ուզում ու նոր կյանք,
Հին երկրիս համար հուսահատ,
Եւ դարձնել պիտ նրան կարենանք՝
Երջանիկ, ու հզոր, ու Ազատ:

Արդ ելել եմ, գտել եմ ժպիտս,
Եվ ձեռքերս բաց՝ պարզել վեր,
Որ լույսի մարտնչող ասպետի պես,
Կերտեմ ցնծության ժամը մեր:

Եւ մենակ չեմ, մենակ չեմ, մենակ չեմ:
Քայլում եմ, քայլում եմ, քայլում,
Ու մեր մեկտեղվող աչքերի մեջ,
Հույսի արեգակ է փայլում:

Այսօր մենք անում ենք մեր քայլը,
Մենք անում ենք մեր քայլը այսօր,
Սա պատվով քաղցրացած ճանապարհ է,
Սա ծնվող հաղթանակ է մի նոր:

Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆ

ЭДУАРД АРТАШЕСОВИЧ АСАДОВ

В сентябре исполнилось бы 95 лет со дня рождения Эдуарда АСАДОВА

Поэт-фронтовик, лирик, Герой Советского Союза Эдуард Асадов ушел на войну добровольцем в 17 лет, сразу после выпускного бала. В 1944-м, в сражении за Севастополь, был тяжело ранен, потерял зрение.

С тех пор мир видимого заменила для него поэтическая вселенная. В начале 1960-х творчество Асадова приобрело огромную популярность. Книги, выходявшие 100-тысячными тиражами, немедленно исчезали с прилавков. С неизменным аншлагом на протяжении нескольких десятилетий в самых известных залах страны проходили его литературные вечера, а девочки-школьницы в общие 96-страничные тетради в коричневых колленкорных обложках переписывали его «Трусиху» вместе с «Ты помнишь, Алеша, дороги Смоленщины...», «Некрасивую девочку» Заболоцкого и проникновенно читали их на школьных конкурсах чтецов. Простые, незамысловатые, но сердечные и проникновенные, его стихи сделались необходимыми миллионным читателям.

Он писал о простых истинах, что естественно для человека, прошедшего через войну: все случайное, искусственное, наносное для таких отходит на второй план. Своими корнями Асадов был из Карабаха, родился в туркменском Мерве, рос на Урале. Всегда подчеркивал свою принадлежность к карабахским армянам, старался по возможности чаще посещать историческую родину:

Осенний вечер спит в листе платана,
Огни реклам мигают на бегу,
А я в концертном зале Еревана
В каком-то жарком, радостном тумане
Кидаю душу – за строкой строку.
И как же сердцу моему не биться,
Когда, вдохнув как бы ветра веков,
Я нынче здесь, в заоблачной столице
Армении – земли моих отцов.

Хотя на стихах Асадова выросла половина страны, строгие ценители литературы при упоминании его имени обычно снисходительно фыркали. Так же поступал один из самых беспощадных современных публицистов Дмитрий Быков, пока не встретился с поэтом лично. В результате родился замечательный очерк «Баллада об Асадове», фрагмент из которого предлагаю вниманию друзей.

В тот день, в 1943 году, батарею этого лейтенанта разбили: артиллерия была на максимум – на четыре километра, так что к врагу ее придвинули буквально вплотную. В считанные часы не осталось ни одного целого орудия. Снаряды, однако, уцелели, и лейтенант с шофером Витей Акуловым, бывшим военным моряком, повез их на соседнюю батарею, где еще было из чего стрелять. Это был не просто подвиг – самоубийство. Дорога простреливалась идеально. Машина еле карабкалась в гору. На полпути они заглохли, Акулов изо всех сил жал на тормоза, лейтенант выскочил, долго под огнем крутил ручку и чудом завел мотор. Подъем кое-как одолели, вылезли на плоское горье, но тут их стало видно уже ото-



всюду: налетели два юнкерса. Лейтенанту вместе с Акуловым пришлось выпрыгнуть из машины и залечь под колеса. Юнкерс заходил прямо на них. Лейтенант успел еще пошутить в своей манере – береги, мол, прическу, Акулов, – и тут же рядом, в траншею, ухнула бомба. Осколки, по счастью, пошли вверх, тут подоспели наши истребители, юнкерсы ушли, а лейтенант пошел впереди еле двигающейся машины, показывая маршрут среди воронок. Уцелевший Акулов расскажет обо всем этом, но много позже...

Батарея, куда они ехали, была уже в двух шагах, лейтенант замахаивал рукой – и тут же рядом разорвался снаряд. Все, что наблюдал за лейтенантом с батареи, не сомневались: погиб. Чудес не бывает. Самое обидное было в том, что снаряды эти он, по сути дела, довез, успел, и было ему всего двадцать лет, и все его так любили! Командующий артиллерией второй гвардейской армии Стрельбицкий о нем потом спросил. Ему так и доложили: вез боеприпасы на соседнюю батарею... Выхода не было – у него не из чего стрелять, у соседа нечем... Довез, но у самой цели погиб. Генерал, всего-то два раза его и видавший, очень о нем горевал и на всю жизнь запомнил лейтенанта Осадчего. Ведь накануне видел его, спасающего жизнь старшине, чуть не распек... Ах, знать бы!

На всех встречах с пионерами, которых после войны у него было много, он рассказывал про черноглазого лейтенанта, а после одной из таких встреч услышал, как артист филармонии читает стихи поэта Асадова – как раз о защите Севастополя. Поэт тоже там воевал и, по мнению генерала, в материале ориентировался. Стрельбицкий решил с ним созвониться и рассказать про лейтенанта: может, Асадов напишет, он поэт очень известный, пусть молодежь знает... К тому же он наш, крымский, воевали рядом – должен понять! Он достал в Москве телефон Асадова и стал ему рассказывать про молодого веселого лейтенанта, которого так любили солдаты, который так лихо закуривал под огнем, и над шутками его покатывались все – представляете, он одному молодому солдату сказал, чтоб тот берег уши, а то по лопухому легче попасть... И это как раз перед тем, как ехать на смерть! Надо написать, пусть знают, погиб же парень всего в двадцать лет!

– Не погиб, – сказал Асадов после некото-

рой паузы. – Вы меня не узнаете, Иван Семенович?

А СЧАСТЬЕ-ТО БЫВАЕТ РАЗНОГО РОСТА...

Карабахский армянин Эдуард Асадов, чью непривычную для русского слуха фамилию генерал Стрельбицкий для себя оформил как «Осадчий», был тогда ранен в голову, перенес 12 операций (почти все – под местным наркозом или вовсе без него), навсегда потерял зрение и стал самым известным советским поэтом. Не спорьте – самым! В утешение ревнителям чистого искусства могу напомнить, что популярность ведь – не качественный показатель, она об аудитории и о поэте говорит поровну... Но факт есть факт: в славе с Асадовым не могли соперничать ни Евтушенко, ни Окуджава, ни Ахмадулина. Их слава хоть чуть-чуть, а элитарная. А Эдуард Асадов был любимым поэтом советского народа – с конца 50-х до начала 80-х, а то и позже.

Герой, красавец, мученик, моралист, любимый автор солдатского, сержантского и офицерского состава, кумир состава стародевического, девического и женского, геологического и подводнического, студенческого и пролетарского: не всякого опять же, но составляющего большинство! Суммарный тираж книг Асадова, которых набегает около 40, достиг 3 миллионов, и их было не достать! Ни одного поэта в мире, кроме автора басен и Государственного гимна Сергея Михалкова, так не издавали! А Асадов не был автором Государственного гимна, сочинял лирику – любовную и патристическую, – не имел от государства наград, кроме боевых, не награждался премиями, не печатался в журналах, не занимал должностей, не подписывал осуждающих петиций, и даже самый упорный ненавистник его поэзии, снисходительно третирующий ее с чисто литературной точки зрения, по-человечески не упрекнет его ни в чем: не в чем.

Последняя книга вышла у Асадова в 2001 году. Он продолжал жить в маленькой квартирке недалеко от проспекта Мира с женой Галиной, артисткой-чтицей, вместе с которой он главным образом и выступал. Никаких доходов, кроме пенсии, у него нет. Сумму пенсии он назвать отказался – карабахский армянин, фронтовик, гордость... Гордость он сохранил вполне, достоинство – тоже. Никакой зависти, никакого злопыхательства в адрес более удачливых литераторов, никакой обиды на то, что его никто не помнит...

Хотя что я говорю? Это в прессе, в столичных газетах, в литературных или толстых журналах о нем ни слова, и это естественно. У весьма многих, когда я говорил, что был у Асадова, брови съезжали на затылок: так он жив?! Жив, ему семьдесят шесть лет, он прекрасно выглядит и каждое утро делает двухчасовую гимнастику с

180

четырёхкилограммовыми гантелями. И все это время пишет – практически без единой публикации, с твердо приставшим к нему ярлыком графомана и имитатора, олицетворенного кича...

Так что критика и так называемый умный читатель его действительно не помнят, хотя, впрочем, и всегда не жаловали. А народ – народ помнит своего поэта. И в квартиру, где неисправна телефонная линия, ему частенько звонили, попадая не туда. – Это больница? – Нет, это квартира поэта Асадова, – отвечает его жена. – Поэта Асадова?! Это который – «а счастье, по моему, просто бывает разного роста»? – Да. «От кочки и до Казбека, в зависимости от человека».

Я совершенно искренне полагаю, что ситуация, при которой сто из ста пятидесяти опрошенных комсомольцев любимым поэтом называют Асадова (так было в семидесятых, об этом писала «Комсомолка»), – нормальна. И пусть лучше знают наизусть «Балладу о рыжей дворянке», этот безусловный поэтический суррогат, нежели «Зайку мою». Вы спросите, какая разница? Есть разница. Надо вернуть народу этот кич, чтобы отбить охоту к суперкичу, заполонившему страну. Эта культура – самый массовый, самый секулярный ее вариант – все-таки несет в себе и добро, и красоту, и сострадание в

том виде, в каком они понятны стране. И я, сноб, гурман, смакователь, низко кланяюсь Асадову, самому известному поэту самой большой страны.

К сведению современных русских литераторов, это и называется славой – когда вам ошибочно звонят на квартиру и цитируют ваш текст, едва услышав фамилию: заметьте, после десяти лет глухого официального забвения, всегда постигающего в нашей стране кумиров массовой культуры. А то, что Асадов к ним принадлежит, думаю, не вызовет особых возражений и у него самого. Это тоже литература, только другая. Феномен, отчасти близкий, с одной стороны, к фольклору, а с другой стороны, к поп-культуре. Что в общем сегодня синонимично.

– Эдуард Арташесович, как вы пишете?
– У меня давно отработанный механизм. Я наговариваю на магнитофон, потом слушаю, правлю и печатаю на машинке. Я печатаю со скоростью профессиональной машинистки.

Асадов действительно печатает очень быстро, свободно ориентируется в комнате, двигается со своеобразной восточной грацией; о его слепоте забываешь, хотя лицо с неизменной черной повязкой выглядит подчас пугающе. Нечеловеческой своей волей он заставил себя перелопатить со слуха гору литературы, окончить Литинститут (вместе с Тендряковым, Гамзатовым, Бондаревым – последний, кстати, был

единственным человеком на курсе, с которым они почему-то не дружили), переводить поэтов Армении, Башкирии, Грузии, Узбекистана, выучиться печатать, обращаться с любой техникой, столарить, слесарить, полностью обслуживать себя, шить... Воле его удивлялись врачи.

ЧТО ТАКОЕ СЧАСТЬЕ?

